№ 180 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, 19 ՕԳՈՍՏՈՍԻ

1909

ԵՐԵՍՈՒՆԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, 19 ՕԳՈՍՏՈՍԻ № 180

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ» Сергіевская ул., № 5.
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Խմբագրատան տելէֆօն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզւով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տպարանի տելէֆօն № 228.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԿՈՉ

Թիւրքաց Հայաստանի հայ աղէտեալներին օգնող ՀԱՆԳԱՆԱԿԻՉ ՄԱՍՆԱԺՈՂՈՎԸ, վերսկսելով իր գործունէութիւնը, Կայսերական Բարձր կառավարութիւնից ստացած թոյլտուութեան համաձայն, սրանով կոչ է անում Կայսրութեան բոլոր հայ ազգաբնակութեանը՝ փութալ օգնութեան ձեռք կարկառել Թիւրքաց Հայաստանի տառապեալ և աղէտեալ հայ ժողովրդին, մանաւանդ Ադանայի սոսկալի ջարդերից յետոյ անօգնական, անտէր մնացած թշուառ որբերին:

Անօրինակ է պատմութեան մէջ և սոսկալի այն աղէտը, որին ենթարկվեց Ադանայի և շրջակայքի հայ ժողովուրդը: Եւս առաւել ուրեմն բարոյական ահագին պարտականութիւն է ընկնում Ռուսաստանի և այլ տեղերի հայ ժողովրդի վրա փութալ ամոքել դառն վշտերը, սրբել աղի արտասուքները և փրկել անտէր, անօգնական մնացած որբերին:

Նուէրները պէտք է ուղարկել Հանգանակիչ Մասնաժողովի անդամ-գանձապահ Առաքել Սարուխանեանին այս հասցէով. Тифлисъ, Контора А. И. Манташева и Кº, Аракелу Саруханяну. Tiflis, ociété Mantacheff et. C-ie, A. Saroukhan. (Կ. Հ.) առ. 595. 10—7

„ՌՈՍՍԻԱ“ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

սրանով պատիւ ունի տեղեկացնել ի գիտութիւն ընդհանուրի, որ Ընկերութեան Թիֆլիսի բաժանմունքի գրասենեակը այս տարվայ օգոստոսի 24-ից կը տեղափոխվի Սօլօլակսկայա փող. տ. Ա. Ս. Մարդանովայի, № 12.

(ա.) 803. 1—1

ԴՊՐՈՑ-ՊԱՆՍԻՕՆ ԵՒ ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՐՏԷԶ
Ս. Վ. ԱՐՂՈՒԹԵԱՆ-ԵՐԿԱՅՆԱԲԱԶՈՒԿԻ
(Միխայլօվսկի պրօսպ. №138, սեփ. տուն)

Բացի բոլոր անհրաժեշտ առարկաներից բոլոր կրթական հաստատութիւնները մտնելու համար՝ սովորեցնում են նոր լեզուներ, ձեռագործ, նկարչութիւն, մէտկա, մարմնամարզութիւն, գծագրութիւն, երգեցողութիւն: Երեխաների ընդունելութիւնը օգոստոսի 15-ից: Պարապմունքները սկսվում են սեպտ. 1-ից:

(Հ. շ. Ե.) առ. 782. 3—3

Թիֆլիսի Մանթաշեան առեւտրական դպրոց
(Արմեանսկի բազարի և Կաթօլիչեսկայա փ. անկիւն)
Ընդունելութեան քննութիւնները սեպտեմբերի 2-ին, 3-ին և 4-ին
Խնդրագիրների ընդունելութիւնը ամեն օր, առաւօտեան ժամը 8 և կէսից մինչև 11-ը
761. (օ. մ.) առ. 5—4

ԹԻՖԼԻՍԻ ԱՐՀԵՍՏԱՒՈՐԱՑ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ
յայտարարում է ի գիտութիւն ընդհան. որ՝
—○✤ ԱՐՀԵՍՏԱՒՈՐԱՑ ԱՒԱԳԻ ՄԻ ԹԵԿՆԱԾՈՒԻ ✤○—
ընտրութիւնները նշանակված են այս օգոստոսի 20-ին, առ. ժամը 10-ին, Թիֆլիսի Ժողովարանի նախկին ամառային այգում, Միքայէլեան փող.:
(ա.) 809. 1—1

Ղափանի եւ Մեղրիի
շրջանի գիւղական դպրոցներում պաշտօնավարելու համար խնդրատու ուսուցիչներից նրանք, որոնք մինչև ամսիս 20-ը առանձին հրաւէր չեն ստանայ, ազատ են համարվում:
առ. (Կ. Ե.) 795. 2—2

Դպրոց
ԿԱՏ. ԼԻՍԻՑԵԱՆԻ
Աշակերտների ընդունելութիւնը ԱՌԱՋԻՆ (աղջիկների համար երկրորդ) դասարանն և պատրաստականի բոլոր բաժանմունքները օգոստոսի 27-ից, Բեհբութեան փող. սեփ. տ. № 25.
(օգ. 12,16,19,23,25) 775. առ. 5—3

Օգոստոսի 1-ից
ՎԼԱԴԻԿԱՎԿԱԶՈՒՄ
ԱՐՍԷՆ Վ. ԴԷՑԿԱՐԽԱՆԵԱՆՑԸ
ԲԱՑԵԼ Է
ԳՐՔԵՐԻ ԵՒ ԹՂԹԵՐԻ
Վաճառանոց:
(առ.) (օ. մ.) 659 25—14

ԾԱԽՎՈՒՄ Է
«ՄՇԱԿԻ» ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ
ՅՕԳՈՒՏ
ԱԴԱՆԱՅԻՆԵՐԻ
Եապօնական գեղանկար և բազմագոյն լուսանկարներ, հատը 60 կ.:
Դիմել գրասենեակին, Սերգիեվսկայա տ. № 5
(Ե. Հ. Կ.) առ. 770. 10—3

ԿԱՐԵՒՈՐ ՊԱՅՄԱՆՆԵՐ

III

— Ո՞վ պէտք է խնամի և պահպանի ձեր ստեղծած գործը. ո՞վ պէտք է հսկի գործի առաջընթացութեան վրա:

Ահա մի հարց, որ առաջ է գալիս ամեն անգամ, երբ մի որևէ տեղում ձեռնարկվում է որևէ գործ:

Օրինակ, դուք բաց էք արել գիւղում մի արհեստանոց, մի գրադարան, մի որևէ արդիւնաբերական գործ:

Դուք ցոյց էք տուել գործելու եղանակը և գնացել:

Արդեօք գործը առանց մի ուևէ վերահսկող կազմակերպութեան, դիցուք առանց մի հոգաբարձութեան կամ մասնաժողովի, կարո՞ղ է կանոնաւոր առաջ ընթանալ:

Դպրոցը առանց հոգաբարձութեան առաջ չէ գնում:

Նոյնն էլ վերաբերում է և ամեն մի ձեռնարկութեան, որը հանրային նշանակութիւն ունի և առանձին անհատական բնաւորութիւն չէ կրում:

Եթէ այդպիսի մի հսկող մարմին չը լինի, այն ժամանակ շատ օգտակար հանրային ձեռնարկութիւններ, որոնք սկսվում են գիւղերում, մի քանի ժամանակից յետոյ կը մնան անխնամ և կը լքվեն ու կը քայքայվեն:

Ինչպէս ասացինք մի քանի օր առաջ, շատ տեղերից հրաւիրում են դասախօսների և մասնագէտների գնալ գիւղերը և տարածել օգտակար գիտելիքներ:

Բայց այդ հրաւիրող գիւղերը չը պէտք է կարծեն, թէ հնարաւոր է որևէ մեծ և լուրջ գործ իրագործել առանց տեղական մարդկանց մշտական գործակցութեան:

Մասնագէտը պէտք է հաւատացած լինի, որ նրա գնալուց յետոյ մարդիկ հոգատար կը լինեն պահպանելու այն գործը, որ նա ստեղծել է, կատարելու այն հրահանգները, որ նա աւանդել է:

Եթէ մեր գաւառական փոքր ի շատէ կարող անձնաւորութիւնները չուխտեն նուիրվել նոր կուլտուրական գործի պահպանութեան և զարգացման, այդ գործը դժուարութեամբ և կաղեւաղ առաջ կերթայ և չի տայ այն բարեբեր հետեւանքները, որոնք սպասվում էին նրանից:

Թող ոչ ոք չը կարծէ, թէ կուլտուրական գործն առանց աշխատանքի, առանց լուրջ ուշադրութեան կը պատուաստվի մի երկրում: Ոչ: Ամէն մի ընդարձակ կուլտուրական ձեռնարկութիւն պահանջում է որոշ պայմանների կատարում, որը պէտք է լինի պարտաւորական:

Եթէ չեն լինի տեղական ույժերի համախմբումներ՝ սկսված գործերը պահպանելու և խնամելու համար, այն ժամանակ համարեա աւելորդ է այդպիսի տեղերում նոր գործեր և ձեռնարկութիւններ ներմուծելը, որովհետև հաւանօրէն կը քայքայվեն սկսված գործերը, և յետոյ մեղաւոր և անաջող կը ճանաչվի ինքը գործը, մինչդեռ այդտեղ մեղաւորները այն տեղական մարդիկն են, որոնք չեն պահել պահպանել կուլտուրական գործը, մինչև որ նա խոր արմատներ գցի կեանքի մէջ և բոլորովին պատուաստվի նրա մէջ:

Տեղական գործունէութիւնը, իբրև զեմստվային ոգու արտայայտութիւն, ունի կատարելու խոշոր և էական դեր, որի վրա և պէտք է կենտրոնացնել յատուկ ուշադրութիւն:

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Բուդապեշտ, 15 օգոստոսի

Բացվեց միջազգային բժշկական կօնգրէսը: Ներկայ են մօտ 4000 մասնակցողներ, որոնց թւումն են երկու կիսագնդերի բժշկականութեան ականաւոր ներկայացուցիչներ և համարեա բոլոր կառավարութիւնների պաշտօնական պատգամաւորները: Կօնգրէսին եկան ռուս բժիշկներ Պետերբուրգից, Մոսկվայից, Կազանից, Վարշավայից, Տօմսկից, Կիէվից և ուրիշ քաղաքներից: (Հ. Գ.)

—

Բարսելօնա, 16 օգոստ.

Երէկ գնդակահարվեց յեղափոխական պարագլուխներից Անտօնիօ Մօլէտը: (Հ. Գ.)

—

Օդեսսա, 16 օգոստ.

Թիւրքիայի սանիտարական ձեռնարկութիւնների պատճառով, ֆրանսիական «Մեսաժէրի Մարիտիմ» նաւագնաց ընկերութիւնը հրաժարվում է ճանապարհորդներ ընդունել Կ. Պօլիս տանելու համար: (Հ. Գ.)

—

Պարիզ, 16 օգոստոսի

Պօստ-հեռագրական մինիստր Միլէրանը ստորագրեց այն հրովարտակը, որով վերստին ծառայութեան են ընդունվում 146 արձակված պօստային ծառայողներ: (Հ. Գ.)

—

Վիէննա, 16 օգոստոսի

Մամուլի մէջ երևաց չեխական բժիշկների բացատրութիւնը այն բանի մասին՝ թէ ինչու նրանք հրաժարվեցին մասնակցելուց բուդապեշտեան բժիշկների համաժողովին: Բացատրութեան մէջ մատնացոյց են արվում հետևեալ փաստերի վրա ունգարացիների վերաբերմունքից դէպի սլաւօնները: Ունգարիայի քաղաքական բանտերը լցված են սլաւօններով: 2,500,000 սլօվակներ, չը նայելով 1868 թւի օրէնքին, չեն կարողանում բանալ բարձր և միջնակարգ դպրոց. նրանց գիմնազիաները կառավարութիւնը փակեց 30 տարի առաջ ըստ երևոյթին ընդմիշտ: Սլօվակների 3000 տարրական դըպրոցներից չը կայ ոչ մէկը, որի մէջ դասաւանդութիւնը մաջարների լեզւով չը տարվէր: Բժիշկ-սլօվակը, որը ընտրողներին ուղղած իր ճառի մէջ մատնացոյց արեց այն օրէնքի վրա, որը թոյլ է տալիս դըպրոցում և դատարանում մայրենի լեզւի գործածութիւնը, մի տարի նստեց բանտում և վճարեց 900 կրօն տուգանք: Բոլոր սլօվակ բժիշկներից ծառայութեան մտնելու ժամանակ ստորագրութիւն է առնվում այն մասին, որ նրանք հրաժարվում են որևէ գործունէութիւնից յօգուտ իրանց ժողովրդի: Չէխ բժիշկները այդ փաստերից այն եզրակացութիւնն են հանում, որ վայելել մի այնպիսի երկրի հիւրասիրութիւնը, ուր նրանց արիւնակից ազգականների իրաւունքները ոտնակոխ են լինում, նրանք անհամապատասխան են գտնում իրանց արժանապատւութեան և ազգային զգացմունքի հետ: (Հ. Գ.)

—

Նիւ-Եօրկ, 16 օգոստոսի

Մօնտերէյում հեղեղի ժամանակ, որ ծածկեց փողոցները 17 և կէս դիւյմ, ջրահեղձ եղան 1200 հոգի. 1500 հոգի առանց ապաստանի են: Վնասները հասնում են 20,000,000 դօլլարի: Հեղեղը շարունակվեց ուրբաթ և շաբաթ: Ամենամեծ թիւը կորաւ գետի հարաւային ափին, երբ փլվեցին այն շինութիւնները, որոնց տանիքներին փրկութիւն էին որոնել շատերը: Հազարաւոր ժողովուրդ հիւսիսային ափին աղէտի անզօր ականատեսներ էին: Ջրանցքային մագիստրալը փչված է. քաղաքը զրկված է խմելու ջրից, էլէկտրական լոյսից, տրամվայից և երկաթուղային հաղորդակցութիւնից: (Հ. Գ.)

—

Թէմիր-խան-Շուրա, 17 օգոստ.

Շուրայով անցնում են Գունիբ զօրքերը, որոնք պէտք է մասնակցեն Գունիբեան հանդէսներին: Զօրքերը գնում են Գունիբ մանեօվրներով: Գունիբում կը վերարտադրվեն 50 տարի առաջ եղած շտուրմը և քաղաքի գրաւումը: Ապշերօնեան զօրագունդը, Թէմիր-Խան-Շուրայի հիմնադիրը, ողջունվեց ազգաբնակութեան կողմից աղ ու հացով: Աւանապետը ճառ արտասանեց: (Հ. Գ.)

—

Բերլին, 16 օգոստոսի

Ճիշդ ցերեկ. ժամը 1 և 30 րօպէին «Ցէպպելին 3-րդը» երևաց Տեմպէլհօֆերֆէլդ հրապարակի գլխավերևում: Ողջունելով կայսրին, օդապարիկը մի քանի անգամ իջաւ և բարձրացաւ: Եկեղեցիների զանգակների ղօղանջիւնով և հրապարակում ժողոված հարիւր-հազարաւոր ամբոխի ցնծագին բացագանչութիւնով օդապարիկը դիմեց դէպի Կրեյցբուրգ և մեծ շրջան կատարելուց յետոյ վերադարձաւ կայսեր կանգնած տեղը և զանազան վարժութիւններ կատարեց: Ժամը 1 և 50 րօպէին օդապարիկն աջողութեամբ իջաւ տեգէլեան հրացանաձգավայրը: (Հ. Գ.)

ԽԼՐՏՈՒՄՆԵՐԸ ՅՈՒՆԱՍՏԱՆՈՒՄ

Բերլին, 15 օգոստ.

Վօլֆի գործակալութեանը հեռագրում են Աթէնքից, որ զօրքի և նաւատորմի օֆիցէրների պատգամաւորութեանը, որ մտադիր էր պետիցիա ներկայացնել մինիստր-նախագահին, մերժում տրվեց և արգելվեց ներկայանալ: Այդ պատճառով մայրաքաղաքի զօրաբանակի օֆիցէրները ժողով գումարեցին: Լուրերին նայած, նա մտադրվում է զինւորական ցոյց սարքել: Մինիստրների խորհուրդն այդ առիթով խորհրդակցութիւն կազմեց: (Հ. Գ.)

—

Պարիզ, 15 օգոստ.

Հավասի գործակալութեանը հաղորդում են Աթէնքից, որ մինիստր-նախագահ Ռալլին հրաժարական տուեց: Նոր կաբինէտի կազմումը յանձնված է, լուրերի համաձայն, Միխալիսին: Օֆիցէրների և ունտէր-օֆիցէրների մի խումբ մի զօրամասով բանակ դրեց քաղաքից դուրս: (Հ. Գ.)

—

Աթէնք, 16 օգոստոսի

Աթէնքի գործակալութիւնը հաղորդում է, որ Ռալլիի մինիստրութիւնը հրաժարական տուեց, որովհետև չը համաձայնեց օֆիցէրների առաջարկած պայմաններին:

Նոր կաբինէտը կազմվեց հետևեալ կերպով. Մավրօմիխալիս՝ մինիստր-նախագահ և արտաքին գործերի մինիստր, Տրիանդաֆիլակոս՝ ժամանակաւոր զինւորական մինիստր, Տօֆալիս՝ ներքին գործերի մինիստր, Էրտակսիս՝ արդարադատութեան, Գամիանոս՝ ֆինանսների, Պարագիկօտտի՝ ծովային և Զախոս՝ ժողովրդական լուսաւորութեան: Նոր մինիստրները հաւանօրէն այսօր կերդուեն: Կարծում են, որ զինւորական շարժումը կը վերջանայ: Պալատը հնարաւորութիւն է ձեռք բերում հաւանութիւն տալու կառավարութեան առաջադրած ձեռնարկութիւններին: Յոյս կայ, որ օֆիցէրները և զինւորները կը վերադառնան իրանց զօրանոցները:

Մայրաքաղաքում և ամբողջ երկրում լիակատար հանգստութիւն է: (Հ. Գ.)

—

Աթէնք, 17 օգոստոսի

Աթենական գործակալութիւնը հաղորդում է, թէ նոր մինիստրութիւնը արտաքին քաղաքականութեան մէջ ոգևորված է անկեղծ խաղաղասիրութեան զգացումով: Մինիստրութիւնը կը ներկայացնէ պարլամենտին ռէֆորմների ծրագիրը, որոնք կապահովեն երկրի կանոնաւոր զարգացումը և միջոցների աջող շահագործութիւնը: (Հ. Գ.)

—

Պարիզ, 16 օգոստոսի

Աթէնքից Հաւասի ստացած տեղեկութիւնների համաձայն, այնտեղի պաշտօնական շրջաններում հաւատացնում են, որ այսօր կը հրատարակվի մի հրովարտակ շարժմանը մասնակցած օֆիցէրներին ներումն շնորհելու մասին: Դրանից յետոյ զօրքերը կը վերադառնան զօրանոցները: (Հ. Գ.)

ԹԻՒՐՔԻԱՅԻ ՇՈՒՐՋԸ

Սալօնիկ, 15 օգոստ.

Տեղումս ստացված տեղեկութիւնների համաձայն, Չերնոգօրիայի սահմանի վրա Բերանէի մօտերը Մեծ կոչված գիւղում երրորդ օրն է՝ հրացանաձգութիւն է սև-լեռնցիների և ալբանացիների միջև: Առիթ ծառայում է Թիւրքական հողին մօտ ընկած արօտատեղիների վերաբերութեամբ ծագած վէճը: Երկու կողմից կան վիրաւորներ և սպանվածներ:

Իփէկից դէպի արևմուտք Րուգօվա գիւղում ալբանացիները յարձակվել են ազգաբնակութիւնից զէնքերը խլող և հարկերը ժողովող զօրամասի վրա: Զօրամասին այստեղից ուղարկվեցին ամրութիւններ:

Իփէկ են բերվել ութ ալբանացի օֆիցէրներ Մօնաստիրից, Ցեստից և Գէվգէլիից: Նրանք ձերբակալվել են հակասահմանադրական պրօպագանդայի համար:

Օգոստոսի 14-ին օսմանեան բանկի մօտերը անյայտ մարդիկ վիրաւորեցին փողոցով անցնող Սանդանսկուն և նրա բարեկամ Հաջիևին: Վէրքերը վտանգաւոր չեն: Կասկածում են Սարաֆօվի հետևորդների վրա, որ կամեցել են մահափորձ կատարել: Եղան բազմաթիւ ձերբակալութիւններ: (Հ. Գ.)

—

Կ. Պօլիս, 17 օգոստոսի

Լուրերը Եմէնից հակասական են: Հիւպատոսական զեկուցագրերը Ջէդդայից հաղորդում են, թէ իբր Եահեա իմամը, անբաւական՝ աւտօնօմիայի յետաձգմամբ, միացել է արաբների հետ և իբր թէ Լօհադիան առնված է, հերքվում են Բ. Դրան կողմից: Լուրը, թէ զօրանոցը Սանայի մօտ պայթեցվել է, ճիշդ չէ: Յայտնի է միայն, որ Գօլէյդի շրջանում խմորումն է տեղի ունենում արաբների մէջ, որոնց առաջնորդն է իրան Մեհտի կոչող մի շէյխ: Այդտեղ զօրքեր են ուղարկված: Մէքքայի շէրիֆը դուրս եկաւ Մեհտու դէմ: Պատրաստվում են չորս պատերազմական նաւեր և պատրաստում են ուղարկել 36 բատալիօն զօրք: (Հ. Գ.)

—

Կ. Պօլիս, 15 օգոստոսի

Ալբանացիները առաջվայ նման շարունակում են դիմադրել Թիւրքաց իշխանութիւններին: («Б.»)

—

Վիէննայից լրագիրներին հեռագրում են, որ Ալբանիայում աճում է ապստամբութիւնը: Այնտեղ կրկին ուղարկվում են զօրքեր. սպասվում է, որ բացարձակ դրութիւն կը մտցվի: Կրետէի քրիստոնեաները հակայունական բոյկոտին պատասխանում են Թիւրքական ապրանքների բոյկոտով։

ԳՈՐԾԱԴՈՒԼԸ ՇՎԵԴԻԱՅՈՒՄ

Ստոկհօլմ, 16 օգոստոսի

Զանազան քաղաքներից տեղեկութիւններ են ստացվում աշխատանքները վերսկսելու մասին։

Սպիրտային խմիչքեղէնի վաճառման արգելքը մնում է առայժմ իր ոյժի մէջ (Հ. Գ.)

Ստոկհօլմ, 16 օգոստոսի

Շվէդիայի բանուորական կազմակերպութիւնների ներկայացուցիչները, ժողովվելով խորհրդակցութեան Ստոկհօլմում, որոշեցին շարունակել գործադուլը։

Մամուլը Ստաֆի և Բէկմանի առաջարկութեանը վերաբերում է բացասաբար։ (Հ. Գ.)

Ստոկհօլմ, 16 օգոստոսի

Րիկսդագի երկու պատգամաւոր՝ Նախկին պրէմիէր-մինիստր Ստաֆ և լիբէրալ կուսակցութեան կենտրօնական կոմիտէտի անդամ Բէկման կառավարութեանը ներկայացրին միջնորդութեան նախագիծ տէրերի և գործաթող բանուորների միջև։ Խստագոյնս դատափետելով գործաթողներին, իբրև պայմանագիրը խախտողների, և կարծիք յայտնելով թէ հարկաւոր չէ այնպիսի միջոցներ ձեռք առնել, որոնք կարող են այլ կերպ հասկացվել գործաթողների կողմից, նրանք առաջարկում են հետևեալ ելքը.— միջնորդ դատարան՝ աշխատանքների անյապաղ վերսկսմամբ հանդերձ, կամ հաշտարար յանձնաժողով, կամ թէ երկուսը միասին. ըստ որում մի քանի հարցեր կը լուծէ միջնորդ դատարանը, իսկ մի քանիսն էլ հաշտարար յանձնաժողովը։ (Հ. Գ.)

Ստոկհօլմ, 16 օգոստոսի

Այսօր ժողովրդական տանը դրամական նպաստներ բաժանեցին աւելի կարիքաւոր գործաթողներին։ Մաքսիմալ նպաստը հասնում էր մինչև 4 կրօնի իւրաքանչիւր հոգու մի շաբաթվայ համար։ Գործադուլային կոմիտէտի գանձարկղում դրամի բացակայութեան պատճառով շատերը մերժում ստացան։ (Հ. Գ.)

Ընդհանուր գործադուլի երկրորդ շաբաթն ընթանում էր առանց փոփոխութիւնների։ Կառավարութեան արած հաշւով, օգոստոսի 5-ին գործադուլ անողների թիւը 284,418 էր, այն ինչ ինն օր առաջ նրանց թիւը 285,762 էր։ Երկաթուղական գործադուլը, որպէս յայտնի է, չը կայացաւ։ Հաղորդում են այժմ, որ երկաթուղական ծառայողների ձայների մեծամասնութիւնը գործադուլին միանալու ձայնակից էր, բայց գործադուլի կողմնակիցների թիւը այնուամենայնիւ, չը հասաւ ընդհանուր ձայների թւի $^2/_3$-ին, որ պահանջվում է երկաթուղական դաշնակցութեան կանոնադրութեամբ մի այդպիսի պատասխանատու քայլի համար։ Բազմանում են կառավարութեանը ուղղված կոչերը, որոնցով պահանջվում են այս կամ այն կերպ վերջ դնել կռւին։ Շվէդական բանկերի և խոշոր առևտրական ֆիրմաների ներկայացուցիչները դիմեցին թագաւորին, խնդրելով կառավարութեան միջամտութիւնը, որովհետև երկիրը այլևս ոյժ չունի տանելու գործադուլի պատճառած ահագին կորուստները։ Բուրժուազական մի լրագիր գրում է, որ շվէդական արդիւնաբերութիւնը, բացի մինչև այժմ կրած վնասից, կը կորցնէ մրցելու ընդունակութիւնը միջազգային շուկայի վրայ, եթէ գործադուլը դեռ էլի երկար տևի։ Կառավարչական օրգանում ծանուցում եղաւ, որ կառավարութիւնը դիտաւորութիւն ունի կողմերը հաշտեցնելու փորձ անել։ «Berl. Tageblatt» լրագրի թղթակիցը կառավարութեան այդ վճիռը վերագրում է գործատէրերի ճնշման։

«Р. Вѣд.» լրագրի Ստոկհօլմի թղթակիցը հեռագրում է, որ գործատէրերի դաշնակցութեան նախագահն ասել է նրան, որ այժմ, երեք շաբաթ տևող կռւից յետոյ, գործատէրերը չեն ցանկանում ոչնչացնել բանուորական կազմակերպութիւնները. նրանք ընդունում են նրանց իրաւաբանական նշանակութիւնը և ցանկանում են կանոնաւորել օրավարձը միմիայն արդիւնաբերութեան մի քանի ճիւղերում։

Շվէդական կանայք, որոնց թւում և Սէլմա Լագէրլեօֆ, դիմեցին թագաւորին մի խնդրագրով, որի մէջ յանուն մարդկութեան և սովամահ եղող մանուկների խնդրում են նրան դրդել կռւող կողմերին՝ բանակցութիւնների մէջ մտնել։

Բեռլինից «Р. Вѣд.» լրագրի սեփական թղթակիցը հեռագրում է. «Ստոկհօլմում այսօր գործի կանգնեցին ոչ սօցիալիստական դաշնակցութեան անդամները։ Կարգը չը խախտվեց»։

«Berl. Tageblatt» լրագրին հաղորդում են, որ գրաշարների կազմակերպութեան կոմիտէտը մի կոչ հրատարակեց, որի մէջ հաւատացնում է, որ գործադուլի վախճանը մօտենում է։ Կոչը ուղղված է նոյնպէս գործատէրերին, նրանց ուշադրութիւնը հրաւիրելով, որ բանուորները գործադուլի մէջ մտան ոչ եսասէր շարժառիթներով։

Օգոստոսի 21-ին, նոր տոմարով, լրանում է գործադուլի 19-դ օրը։ Օգոստոսի 20-ին լրագիրների առաւօտեան և երեկոյեան հրատարակութիւնները մի կողմից դիմում են բանուորներին հայրական յորդորներով գործադուլի առիթով, միւս կողմից առաջնորդողներ տպեցին շատ թափանցիկ հեռանկարներով։ Խորհուրդ է տրվում իրանց հայրենիքը սիրող քաղաքացիներին անյապաղ դիմել կառավարութեանը մի խնդրագրով, որպէսզի նա միջամտի կօնֆլիկտին և դադարեցնէ գործադուլը, որովհետև այլևս այդպէս շարունակվել չէ կարող։ Յիրաւի, իւրաքանչիւր օր պետական երկաթուղիները բեռների և ճանապարհորդների բացակայութեան պատճառով կորցնում են աւելի քան 60 միլիօն կրօն, իսկ մասնաւոր երկաթուղիները երկու անգամ աւելի։ Խաղաղութեան կօնգրեսը յետաձգված է մի տարով. տուրիստներով լի երեք շոգենաւ կանգ չառան Շվէդիա. հիւրանոցների և շոգենաւային ընկերութիւնների եկամուտները կիսով չափ կրճատվեցին. խօսում են, որ շուտով սնանկանալու են մանր գործարանային արդիւնաբերական շատ ձեռնարկութիւններ։

Հրաման է արձակված ոստիկանութեանը այլևս միտինգներ թոյլ չը տալ և ցոյցեր չանել։

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՇՈՒՐՋԸ

Թաւրիզ, 16 օգոստ.

Վերստին երևացին մեծ բանակութեամբ եկւորներ Կովկասից։ Թէհրանում կատարվող գաղտնի մահվան պատիժների տեղեկութիւնները համարձակութիւն են տալիս տեղական ֆէդայիներին և նրանց պարագլուխ Սաթթար-խանին։

Տեղեկութիւն ստացվեց, որ Ազաբում Րահիմ խանը հանդիսաւոր ընդունելութիւն է սարքել Ղարադաղ մեկնող օֆիցէրներին։ (Հ. Գ.)

Արդաբիլ, 16 օգոստ.

Թաւրիզի ճանապարհին, շնորհիւ ռուսաց հիւպատոսարանի ձեռք առած միջոցների, բացվեց կարաւանի երթևեկութիւնը։

Եկաւ մի քառավան 200 ուղտերով ռուսական ապրանքներ բարձած։ Սպասվում են ուրիշ կարաւաններ։ (Հ. Գ.)

Թաւրիզ, 16 օգոստ.

Ուրմիայից հաղորդում են, որ Մարգէրգիզ գիւղի ուղղափառ գիւղացիներին այդ գիւղում բուն դրած քիւրդերի ճնշումներից պաշտպանելու համար՝ այնտեղ ուղարկվեց հիւպատոսարանի պահակախումբը կապիտան Լեվէյտամի հրամանատարութեամբ, առաջարկելու համար քիւրդերին հեռանալ գիւղից։ Քիւրդերը պահակախմբին հանդիպել են հրացանաձգութեամբ։ Պահակախումբը ստիպված է եղել պատասխանել։ Երէկ շարունակվող հրացանաձգութեան ժամանակ վիրաւորվել են 2 զինուոր։ Քիւրդերի կորուստը հաշւում են մօտ 20 սպանված և վիրաւոր։ (Հ. Գ.)

Թէհրան, 16 օգոստ.

Պօստ-հեռագրական նախկին մինիստր Զալսպ-Դովլէն, թագնվելով կառավարութեան հալածանքից նրա համար, որ անցեալ տարի մէջլիսը քարուքանդ անելուց յետոյ մի քանի ապաստան գտած նացիօնալիստների յանձնեց շահի զօրքերին, բաստ նստեց ռուսաց միսսիայի մէջ։ (Հ. Գ.)

Թաւրիզ, 17 օգոստոսի

Ուրմիայի հիւպատոսարանի պահակախումբը ուժեղացնելու համար այստեղից մեկնեցին հրացանաձիգ վաշտի 50 զինուորներ։ (Հ. Գ.)

Պետերբուրգ, 15 օգոստոսի

Գահընկէց շահ Մահմէդ-Ալիի ստացուածքային դրութեան մասին կատարվող բանակցութիւններն արդէն վերջացան և պարսից կառավարութեան հետ այդ առիթով համաձայնութիւն է կապված։ Այս օրերս Մահմէդ-Ալին կը մեկնէ Ռուսաստան։ Նրան կուղեկցէ մինչև ռուսաց սահմանագլուխը այն պահակախումբը, որ կազմում է ռուսաց զօրախմբի մասը և գտնվում է Ղազվինում։

Լօնդօնի և Պետերբուրգի կաբինէտների միջև բանակցութիւններ են վարվում միացեալ ոյժերով ճնշումն գործ դնելու պարսից կառավարութեան վրա՝ նպատակ ունենալով ազդելու նրան ազատ թողնել Պարսկաստանի սահմաններից մեկնելու համար Զիլլի-էս-Սալթանէին, որ իրան դրել է Ռուսաստանի և Անգլիայի հովանաւորութեան ներքոյ։ («Б.»)

Գահընկէց արված շահի ֆինանսական դրութեան վերաբերեալ բանակցութիւնները, Թէհրանից ստացված վերջին տեղեկութիւնների համաձայն, նորից ձգձգվեցին այն երաշխաւորութիւնների անբաւարարութեան պատճառով, որ ներկայացրեց պարսից կառավարութիւնը Մահմէդ-Ալիի պարտքը ռուս-պարսկական բանկին վճարելու համար։ Այս օրերս Պետերբուրգից Թէհրան ուղարկվեցին վերջնական պայմաններ այն պարտքը հանգցնելու համար, որ պէտք է քննէ շահի կառավարութիւնը։ Պատասխանը Թէհրանից սպասվում էր օգոստոսի 12-ին։ Այդ պատասխանի հետ կապ ունի Մահմէդ-Ալիի ճանապարհ ընկնելը Ռուսաստան, որը, ամենայն հաւանականութեամբ, կը կայանայ օգոստոսի 14-ին։ Գահընկէց շահի րէզիդէնցիան կը լինի Օդեսսան։ («Нов. Вр.»)

Թէհրանից «Баку»-ին հեռագրում են. «Ռուսական դեսպանութեան մէջ կայացաւ նախկին շահի գործերի համար կազմված յանձնաժողովի, ռուսական միսսիայի և փոխատու բանկի ներկայացուցիչների միացեալ նիստը շահի պարտքերի և նրա Ռուսաստան ճանապարհ ընկնելու հարցի մասին։ Պարզվեց, որ շահի կալուածքները, որ բանկն ընդունել էր որպէս ապահովութիւն նրա 282 ու կէս միլիօն պարտքի և որոնք բերում էին, իբր թէ, 400 հազար թուման, իսկապէս բերում են միայն 60 հազար թուման, և նրանցից ստացվող եկամուտը չէ ապահովում մինչև անգամ տոկոսները։ Մի այլ ապահովութիւն կարող էր լինել շահի երկու տարվայ անձնական ռոճիկը նոր թագաւորութեան սկզբից, ընդամենը մօտ երեք միլիօն ռուբլի, բայց պարսկական կառավարութիւնը չէ ընդունում շահի այդ իրաւունքը և ասում է, որ նա ստացել է բոլորը, ինչ որ ստանալու ունէր։ Սակայն չը կան դօկումէնտներ, որ ապացուցանէին թէ նա փողեր է ստացել կառավարութիւնից, բացի 300 հազար թումանից։ Որովհետև ապահովութեան ուրիշ եղանակ չը կայ, Ռուսաստանի ներկայացուցիչները դիտաւորութիւն ունեն պնդելու, որ կառավարութիւնը ճանաչէ Մահմէդ-Ալիի իրաւունքները անձնական ռոճկի վրա։ Մերժման դէպքում շահը չի հեռանայ Պարսկաստանից և բնակութիւն կը հաստատի քաղաքից մօտ կալուածքում, իսկ նրա պաշտպանութեան համար կը կանչվեն երեք հարիւր կօզակներ Ղազվինի զօրաբաժնից»։

Թէհրանից հեռագրում են «Vossiche Zeitung» լրագրին, որ բախտիարները հրաման ստացան կառավարութիւնից պատրաստվել պատերազմի՝ հարաւի ապստամբների դէմ, որոնք դժգոհ են նոր ռէժիմից և պատրաստվում են արշաւել մայրաքաղաքի վրա։

Վիէննա, 15 օգոստոսի

Այսօր այստեղից մեկնեց պարսկական մինիստրների խորհրդի նախագահ Նասր-ուլ-Միւլքը, որ Բագուի վրայով կանցնէ Պարսկաստան։ («Б.»)

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Գօրի, 15 օգոստոսի

Այսօր, օգոստոսի 15-ին, առաւօտեան ժամը 10-ին, կայարանի կամուրջի մօտ ատրճանակի 3 հարուածով տեղնուտեղը սպանվեց գաւառական բանտի վերակացու Կվաչենկօն։ Զարագործները բռնված չեն։

Արմ. Մարութեան

Մեծ-Ղարաքիլիսա, 15 օգոստոսի

Տեղիցս դէպի հիւսիս, 4 վերստ հեռաւորութեան վրա, գտնվում է Վարդանլու փոքրիկ գիւղը, ուր միասին խաղաղ կերպով ապրում են հայերը և թուրքերը. բնակիչների թիւը հասնում է 450 հոգու (128 ծխ.). բնակիչների գլխաւոր պարապմունքն է հողագործութիւնը և անասնապահութիւնը։ Հողի զգալի պակասութեան պատճառով, այստեղ մշտապէս բուն է դրել սովը։ Բնակիչները չունեն ուսումնարան և խարխափում են տգիտութեան մէջ։ Մի մոռացված գիւղ, որը այցելողի վրա չափազանց ցաւալի տպաւորութիւն է թողնում։

Գիւղի վերոյիշեալ պայմանները աչքի առաջ ունենալով, ժողովրդական դասախօսութիւններ կազմակերպող մասնաժողովի անդամները, ուրբաթ օրը, որ թուրքերի կիրակին էր, կազմակերպեցին մի հանրամատչելի դասախօսութիւն։

Գօրու սեմինարիայի ուսուցիչ Կոչարլինսկին թուրք բազմութեան առաջ խօսեց «կրթութեան» մասին։ Դասախօսը, իր ասածները աւելի համոզեցուցիչ դարձնելու համար, բերում էր, «Ղուրանից» վկայութիւններ։ Բացի դրանից առանձնապէս շեշտեց ազգերի համերաշխութեան անհրաժեշտութեան վրա։

Մ. Սողոմոնեանցը, նմանապէս թուրքերէն, խօսեց «գիւղատնտեսութեան մասին» և յետոյ սեպարատօրով բաժանեց կաթը։

Թէ դասախօսութիւնները և թէ փորձը մեծ տպաւորութիւն թողին թուրքերի վրա։

Վերջում Կոչարլինսկին խոստացաւ միջնորդել ուր հարկն է՝ մօտիկ ապագայում բաց անելու դպրոց։

Անսահման էր թուրքերի հիացմունքը։

Մասնաժողովը մտադիր է մի շարք այդպիսի դասախօսութիւններ կազմակերպել մեր շրջանի թուրքաբնակ գիւղերում։

Մ. Ղազարեանց

Ախալցխա, 12 օգոստոսի

Երէկ գիշեր, ժամը 11-ին, տեղիս հասարակական կլուբից տուն վերադառնալիս է լինում օրիորդ Զաբէլ Հայրապետեանը՝ մի տղայի ուղեկցութեամբ։ Ալէքսանդրեան փողոցի վրա, հայ-կաթօլիկաց եկեղեցու մօտերը, նրա վրա են յարձակվում երեք զինված երիտասարդներ, որոնք մաուզէրների սպառնալիքներով լռեցնում են օրիորդին և իրանց հետ կառք նստեցնելով՝ փախցնում են Ախալքալաքի շոսսէով դէպի Ծալա։ Տեղեկութիւն է տրվում գաւառապետին։ Մեր եռանդուն գաւառապետը ամեն կողմ ստրաժնիկներ և զինված քաղաքապահներ է ուղարկում, պատուիրելով որ եթէ խելոյն չը գտնեն յանցաւորներին՝ բոլորին էլ պաշտօնազուրկ կանի։ Եւ սակայն ստրաժնիկներին աջողվում է քաղաքից 5—6 վերստ հեռաւորութեան վրա գտնվող Օրփալար գիւղում շրջապատել չարագործներին, երբ վերջիններս իրանց մի ծանօթի տանը պատրաստվելիս են եղել թէյ խմել, իբրև քաղաքից եկած «պատւաւոր հիւրեր»։

Այսօր ցերեկվայ ժամը 12-ին ստրաժնիկները բերին քաղաք չարագործների պարագլուխ «Շահրապի մանչին»—Յովհ. Տէր-Մովսիսեանին—և մի ուրիշ երիտասարդի, իսկ դրանցից առաջ բերել էին օրիորդին։ Զարագործներից մէկին ու կառապանին բռնել էին աւելի շուտ. սրանք իրանց «զոհին» Ծալա գիւղը հասցնելուց յետոյ վերադարձել էին։ «Շահրապի մանչին» և ընկերոջը բերելիս մեծ բազմութիւն էր հաւաքվել փողոցներում։

Մուրադ-Ասպետ

ՑԵՖԵԼՕՎԻ ՈՐԴՈՒ ՅԱՓՇՏԱԿԻՉՆԵՐԸ

Տեղեկութիւն ստացվելով, որ Ցեֆելօվի որդուն յափշտակող խմբի պարագլուխ Ալէքսանդր Իվանօվիչ Կացիաշվիլին, ծականունով «Դրօլիա», թագնված է Օլգինսկայա փողոցում № 42 տան մէջ, ոստիկանութեան պաշտօնեաները այդ տան վրա հսկողութիւն կատարեցին, որով օգ. 15-ի երեկ. ժամը 10-ին մի կրպակում Կացիաշվիլին ձերբակալվեց։ Նա ապրում էր Գօրու գաւառի բնակիչ Անդրէյ Մանդրօկօլէշվիլու անցագրով, ում անունով էլ № 42 տանը բացված է կրպակ, իսկ առևտուրով պարապում էր ինքը Կացիաշվիլին։

Միաժամանակ Կացիաշվիլու հետ կրպակում ձերբակալվեց անյայտ մին, որ ցոյց տուեց Րաչին գաւառի Բարէուլի գիւղի բնակիչ Դաւիդ Օմիաձէի անունով մի անցաթուղթ. իսկապէս նա Թիֆլիսեցի Իօսիֆ Սուլխանօվն է, որի հօր տանը Պետրովսկայա փողոցում 1906 թ. գտնվեց ռումբերի պահեստ (370 հատ), որի համար Սուլխանօվի հայրը դատապարտվեց անժամանակիր աշխատանքների, իսկ նա հէնց այն ժամանակ կարողացաւ անյայտանալ։

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆԸ

IV*)

Մինչդեռ տեղական առևտրական և արդիւնագործող բուրժուազիայի զարգացման համար կային ամեն տեսակ դժուարութիւններ, օտար կապիտալիստները և կապիտալիստական հիմնարկութիւնները վայելում էին հետզհետէ աւելի մենաշնորհեալ դրութիւն։ Տնտեսական կրիզիսը Պարսկաստանի վերջին միապետներին ստիպեց փոխառութիւններ կնքել Անգլիայից և Ռուսաստանից. սակայն այս պետութիւնները տասնեակ միլիօններով դրամ էին փոխ տալիս Պարսկաստանին ոչ թէ սրա միապետների սիրուն աչքերի համար, այլ այն պատճառով, որ, տոկոսից բացի, այդ պետութիւնները պարսկական իշխանութիւնից պոկում էին կօնցեսիաներ յօգուտ իրանց կապիտալիստների.—կօնցեսիաներ՝ բանկեր, տրանսպօրտային ընկերութիւններ հիմնելու, խճուղիներ կառուցանելու, այսինքն ստեղծելու ամեն տեսակ յարմարութիւններ իրանց կապիտալիստների ազատ և դիւրին գործունէութեան համար Պարսկաստանում։

Նրանց գոյքը գտնվում է իրանց հզօր պետութիւնների պաշտպանութեան ներքոյ։ Նրանք ենթակայ չեն երբէք պարսկական դատարանի կամայականութիւններին, այսինչ նահանգապետի կամ թագաժառանգի ուզուրպացիաներին։ Նրանց կեանքի, գոյքի համար պարսիկ կառավարութիւնը անմիջապէս պատասխանատու է, և երբ պատահում է, որ այս կամ այն օտար հիմնարկութեան ապրանքները կամ փողը կողոպտվում են ճանապարհին, պարսիկ կառավարութիւնը պարտաւոր է անմիջապէս հատուցանել թէկուզ աղքատ ժողովրդի կօպէկներով։ Մինչդեռ պարսիկ բանկիրի կամ առևտրականի փողն ու ապրանքը ճանապարհվում է աւելի շուտ իր րիսկով։ Զարմանալի չէ ուրեմն, որ թէ օտար բանկերը և թէ տրանսպօրտային ընկերութիւնները զարգանային. նոյնիսկ տեղացի վաճառականը, եթէ օտար ընկերութեան հետ գոյութիւն ունենար տեղական ընկերութիւն, իր ապրանքի տեղափոխութիւնը յօժարութեամբ կը յանձնէր առաջինին։

Ընկնելով կախման մէջ օտար կապիտալից, Իրանի միապետները շնորհել են նրա ներկայացուցիչներին մօնօպօլիաներ։ Այսպէս, օրինակ, անգլիական բանկը ստացել է թղթադրամներ բաց թողնելու իրաւունք։ Ոչ ոք, բացի անգլիական բանկից, իրաւունք չունի թուղթ փող կտրելու։

Եւ ինչքան մեծանում էր Իրանի միապետների կախումը օտար կապիտալից, այնքան աւելի նրանք դառնում էին սրա հլու ծառաները։ Այս հանգամանքը չէր կարող խուսափել պարսիկ բուրժուազիայի ուշադրութիւնից։ Նա դրան նայում էր խորթ աչքերով և հետզհետէ լցվում էր ատելութեամբ ոչ միայն դէպի իր կառավարութիւնը, այլ և դէպի օտար կապիտալը։

Օտար կապիտալիստների մասին խօսելիս, անհրաժեշտ է կանգ առնել այն դերի վրա, որ կարող է ունենալ նա մի այնպիսի երկրում, ինչպիսին Պարսկաստանն է։

Երբ եւրոպական ինդուստրիան մուտք գործեց Պարսկաստան, երբ հետզհետէ զարգացան առևտուրն ու արդիւնագործութիւնը, տեղական կապիտալն էլ աճեց. ներկայումս արդէն կան այնպիսի պարսիկ բանկիրներ, որոնք, առանձին վերցրած, գուցէ աւելի հարուստ լինեն, քան ռուսական կամ անգլիական բանկերը։ Պարսիկ բանկիրները աջողութեամբ մրցում են իրանց նախկին ուսուցիչների՝ անգլիացիների և ռուսների հետ, և եթէ, այնուամենայնիւ, օտար կապիտալիստները Պարսկաստանից դուրս են տանում խոշոր շահեր, ապա այդ գլխաւորաբար այն պատճառով, որ ֆէօդալական կառավարութիւնը ստեղծել է նրանց համար առանձնաշնորհված դիրք։ Սահմանադրական Պարսկաստանում եւրոպական ֆինանսական բուրժուազիան, զրկվելով նախկին նեցուկից յանձին շահերի կառավարութեան, անպայման ենթակայ պիտի լինի անհամեմատ աւելի ուժեղ, այս անգամ կազմակերպված կօնկուրենցիայի։ Ի զուր չէր, որ նրա ներկայացուցիչները աշխատում էին օր առաջ սանձահարել պարսիկ յեղափոխական բուրժուազիային*)։

Փակագծի մէջ ասենք, որ կան մտածողներ, որոնք, համարելով օտար կապիտալն պրօգրեսիվ տարր Պարսկաստանում, գտնում են անտեղի և յետադիմական պարսիկների պայքարը նրա դէմ։ Այս հարցի մասին լուրջ վէճեր առաջ եկան առանձնապէս Թաւրիզի սօց.-դեմօկրատական գրուպպայի մէջ։ Սկզբում սրա մէջ էլ կային տարբեր կարծիքներ օտար կապիտալի դերի մասին, բայց յետոյ, անխտիր, ամբողջ գրուպպան ընդունեց նրա պրօգրէսիվ նշանակութիւնը ներկայ պայմաններում։ Մտքերը էլ աւելի պարզվեցին, երբ անցեալ տարի ստացվեց Կ. Կաուցկու պատասխան-նամակը, որի բովանդակութիւնը ծանօթ է «Մշակի» ընթերցողներին։

Այն հարցը, թէ ինչ նշանակութիւն ունեն հասարակութեան համար օտար և ներքին կապիտալները, չէ զբաղեցրել ոչ կլասիկ տնտեսագէտներին և ոչ նոյնիսկ Մարկսին։ Այդ հարցի պարզաբանութիւնը տուեց ժամանակակից տնտեսագիտութիւնը։ Ինչպիսի փոփոխութիւններ են մտնում հասարակական յարաբերութիւնների մէջ այն երկրներում, ուր կապիտալը գլխաւորապէս օտար երկրներից է գալիս և դուրս ուղարկում յաւելեալ արժէքը։

«Հակամարտութիւնը կապիտալիստի և բանուորի, վաշխառուի և պարտապանի միջև աւելի սուր է դառնում, աւելի հեշտ է ըմբռնվում ու աւելի ուժեղ զգացնում, երբ երկու կողմերը պատկանում են տարբեր ազգութիւնների, որոնցից իւրաքանչիւրն ունի տարբեր կուլտուրական շահեր։ Այդ կատարվում է այնտեղ, որտեղ կողմերը իրար հետ անմիջական յարաբերութիւնների մէջ են, այլ խօսքերով՝ երբ երկուսն էլ միասին են ապրում*), օր. Ռուսաստանում, երբ ֆաբրիկանտը եւ կամ կառավարիչը հրէայ է կամ գերմանացի։ Ասկէմ կապիտալի ներկայութեամբ—պետական փոխառութիւններ, ակցիօնէրական ընկերութիւններ—անմիջական յարաբերութիւնների հակադրութիւնը կորցնում է իր նշանակութիւնը։

«Միւս կողմից՝ յաւելեալ արժէքի հոսումը դէպի արտասահման՝ առաջնորդում է ամբողջ երկրին դէպի աղքատութիւն։ Սկզբում այդ պրօցեսը կատարվում է աննկատելի կերպով։ Դրսից եկած կապիտալի առաջին ներգործութեամբ աճում է կապիտալը, բարձրանում է արդիւնագործական միջոցների պահանջը, բազմանում է այդ միջոցները պատրաստող բանուորների թիւը և լայնանում այդ միջոցների գործածութեան շրջանակը։ Դէպի արտասահման գնացող յաւելեալ արժէքի հետզհետէ մեծացող հոսման ոչ-ծանր հետևանքները նկատվում են միայն աստիճանաբար։ Այդ հոսումը, ի վերջոյ, ընդունում է այնպիսի չափեր, որ կարելի է լինում այն ծածկել միայն օտար կապիտալների նոր ներմուծումով, այն էլ կարճ ժամանակով։

Ամենից աւելի քայքայող են օտար կապիտալներից նրանք, որոնք երկրի մէջ նոր կապիտալներ չեն բերում, այլ յատկացվում են՝ օրինակ՝ օտար կրեդիտօրների տոկոսները վճարելու, և կամ թնդանօթներ

---

*) Տես «Մշակ» № 179.

*) Յիշեցնում ենք ընթերցողներին Թաւրիզի ռուսական և անգլիական հիւպատոսների այս տարվայ այսպէս կոչված ռեֆօրմների ծրագիրը՝ առաջարկված շահին։ Ա. Չ.

*) Ընդգծումները իմն են։ Ա. Չ.

Իօսիֆ Սուլխանօվը նոյնպէս մեղադրվում է 1909 թ. փետրվարին երկու զինուորների սպանութեան գործի մէջ և 2-րդ կարգի վաճառական Ալ. Այվազեանի և Ֆեֆէլօվի յափշտակութեան մէջ։

Ձերբակալվելու օրից Սուլխանօվը յայտնեց, որ նա ապրում է Անտ Նօվսկայա փողոցում, № 11 տանը, որի պատճառով ոստիկանները խուզարկութիւն կատարեցին այդ տան մէջ, որով պարզվեց, որ Սուլխանօվը այդ տան մէջ երբեք չէ ապրել, բայց ապրում է Օմիաձէն, 22 տարեկան, արհեստով փականագործ, ներկայումս անորոշ պարապմունքի, որը ներկայացրեց № 230 մշտական անցագիր։ Օմիաձէն նոյնպէս ձերբակալված է։

ԶԻՆՎԱԾ ՅԱՐՁԱԿՈՒՄ ԲԱԳՒՈՒՄ

Օգոստոսի 13-ի գիշերը Բագու կայարանի տեխնիկական գրասենեակի մօտերը՝ 12-րդ մասի բանուորների միութեան կառավարչի տան վրա կատարվեց զինված յարձակում հետևեալ պարագաներում։

Գիշերվայ ժամը 1-ի մօտերը, երբ բանուորներն հանգստանում էին տան մէջ, անյայտ չարագործներ, թւով 10 հոգի, ատրճանակները ձեռքերին ներս խուժեցին սենեակը և մահվան սպառնալիքով փող պահանջեցին։ Բանուորները հրաժարվեցին։ Այն ժամանակ չարագործները կոտրեցին շինութիւնը պաշտպանող դռնապան Մահմէդ Րուստամ Բերբալայ-Հուսէյն-օղլու սենեակի կողպէքը և կողոպտեցին նրանից 1050 ռուբլի, որոնցից 600-ը ոսկի և 353 ռուբլի էլ Սադըղ-Ջաֆար-Կուլի-օղլուց՝ թղթադրամներով։

Այս գործը կատարելու ժամանակ չարագործներն իրանց կողմից դռների մօտ յուզված բանուորներին պահպանելու համար դրել էին վեց հոգու, իսկ միւսները կատարում էին կողոպուտը։

Հաւատացնելով որ ուրիշ բան չը կայ վերցնելու, կողոպտիչներից 4-ը յափշտակած փողերով հեռացան, իսկ մնացածները մնացին պահպանութիւն անելու մինչև որ առաջին չորսը տեղից կորան։ Ապա պահպանութիւն անողները, երկիւղ ազդելու համար, օդում կրակեցին մօտ 100 անգամ և շտապեցին փախչել Բալախանու խճուղու ուղղութեամբ։ Կրակոցի ձայնին եկաւ երկաթուղային և քաղաքային ոստիկանութիւնը, բայց կողոպտիչներին ձերբակալել չաջողվեց։

Հետևեալ օրը, առաւօտեան ժամը 7-ին, վնասված բանուորների ցուցմունքով կասկածով ժանդարմական ոստիկանութիւնը կալանաւորեց վնասվածների մօտիկ ընկերներից 9 հոգու։ Հարցաքննութեան ժամանակ նրանցից մի քանիսը խոստովանեցին իրանց մեղքը։

Բոլորն էլ բանտարկված են Բագուի բանտում։

Յետագայ քննութիւնը կատարում են 3-րդ մասի դատախազի օգնականը և երկաթուղամասի դատաստանական քննիչը։ («Б»)

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Կովկասի Փոխարքայի պաշտօնակատար գեներալ Շատիլօվը Կօջօրից վերադարձաւ քաղաք։

◆ Կովկասի Փոխարքայի պաշտօնակատարը նահանգապետներին և զինուորական նահանգապետներին ուղարկել է մի հրահանգիր, որով առաջարկում է ոստիկանութեանը դրդել մեծ հսկողութիւն ունենալ, որպէսզի օրէնքով արգելված գայթակղեցուցիչ պատկերներ չը ցուցադրվեն սինեմատօգրաֆներում։

◆ Թիֆլիսի նահանգապետ Լօղինա-Լօզինսկուն, ինչպէս հաղորդում է «Свѣтъ» լրագիրը, տեղափոխում են Խարկով։ Այս լուրը այնքան էլ հաւանական չէ թւում։

◆ Անդրկովկասեան երկաթուղիների կառավարիչ գ. մ. Նէյգէբաուէրը այսօր կամ վաղը կը հասնի Թիֆլիս։

◆ «Т. Л.»-ում կարդում ենք. «Պետերբուրգից ստացված տեղեկութիւնների համաձայն, սինօդական բարձր շրջաններում վրաց էկզարխութեան հարցն արդէն վճռվել է։ Վճռվել է թողնել Վրաստանի էկզարխի կաֆեդրան։ Վրաստանի էկզարխ նշանակվում է Պլատօն արքեպիսկոպոսը։ Սինօդական գրասենեակը վերափոխվում է կօնսիստօրիայի, իսկ Գօրու եպիսկոպոսի աթոռը վերացվում է։ Վրաստանի էկզարխի ժամանակ կը մնայ միայն վրաց թեմական եպիսկոպոսը՝ Ալլավերդիի։

◆ Թիֆլիսի ոստիկանապետը դարձեալ ոստիկանական պաշտօնեաների ուշադրութիւնն է հրաւիրում այն հանգամանքի վրա, որ նրանք պարտաւոր են քաղաքավարի վարվել հասարակութեան հետ, նաև հսկել, որպէսզի երեկոները մինչև գիշերվայ ժամը 11-ը տների բակերը և պօդեզդները լուսաւորված լինեն, իսկ դռները միշտ փակ, և բացվեն միմիայն զանգահարութիւնից յետոյ։ Ոստիկանապետը խստիւ արգելում է ոստիկանական ծառայողներին պարգևներ ստանալ իրանց աշխատանքի համար, օրինակ գողացված իրերը գտնելու և տէրերին յանձնելու դէպքում և այլն։

◆ Ոստիկանապետը առաջարկել է պրիստաւներին հսկողութիւն ունենալ լիմօնադի գործարանների վրա, որ լիմօնադը պատրաստելու ժամանակ շաքարի փոխարէն գետնախնձորի շարապ չը գործածեն։

◆ Օգոստոսի 14-ին զինուոր պահակները III քաղաքամասում շուրջկալի ժամանակ ձերբակալեցին 20 անգործ և անանցաթուղթ մարդկանց։ Շուրջկալները շարունակվում են։

◆ Ջալալ-օղլի մեկնեց Թիֆլիսի նահանգական դատարանի քրէական բաժնի նոտաշրջանը՝ այնտեղ կուտակված քրէական գործերը վճռելու համար։

◆ Երկրագործութեան դեպարտամենտը 100 ռ. է յատկացրել Թիֆլիսում բացվելիք թռչնապահութեան ցուցահանդէսի համար։

◆ Օգոստոսի 15-ին Թիֆլիս եկան Մօսկվայի գիւղատնտեսական ինստիտուտի ուսանողները՝ Կովկասի հետ ծանօթանալու նպատակով։

◆ Կովկասի Փոխարքայի պաշտօնակատարը թոյլատրել է ազնուական Վլ. Շարկօվին բանալ Թիֆլիսում մասնաւոր երկրաչափական ուսումնարան։

◆ Դ. Ժգէնտին Կուբանի շրջանի կառավարչի առաջ միջնորդութիւն է յարուցել, որ թոյլատրվի հրատարակել Արմաւիրում ամենօրեայ թերթ «Кавказскій Край» անունով։

◆ Կարգադրված է զինուորական վարժութիւնների կրկնողութեան համար $1^1/_2$ ամիս ժամանակով ծառայութեան կոչել նախկին զինուորներին։ Վարժութիւնների տեղը նշանակված է Մանգլիսը։

◆ Կուր գետի և Ջրանցքի ջուրը բակտերիօլօգիական քննութիւնից յետոյ կրկին երևացել է ազատ խօլերայի վիբրիօններից։

◆ Պահնորդական դրութեան կարգով «Դաշնակցութիւն» համախմբման գործի վերաբերութեամբ Մետեխի բանտում բանտարկվածները դրվել են շղթաների մէջ։ (Б.)

◆ Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը դիմել է Սօրմօվի գործարանի ներկայացուցչին, խնդրելով շուտով ուղարկել Մուխրանեան կամուրջի մետաղեայ մասերի մնացած մասերը, քանի որ վերջնականապէս որոշված է կամուրջի աշխատանքներն աւարտել այս տարվայ նոյեմբերի 1-ին։

◆ Օգոստոսի 22-ին նշանակված է Կովկասեան Գիւղատնտեսական ընկերութեան նիստը։

◆ Կովկասում Մանթաշեանի նաւթային ձեռնարկութիւնը անցնում է «Կուրա» անունով ակցիօներական ընկերութեան ձեռքը։

Հաղորդում են, որ Մանթաշեանի բոլոր նաւթահանքերը վաճառվելու են Նօբէլ եղբ. ֆիրմային։ («Р. У.»)

◆ Օգոստոսի 17-ից բացված է Թիֆլիսի հասարակական գրադարանը, որ փակված էր յուլիսի 11-ից։

◆ Այսօր, չորեքշաբթի, առաւօտեան 11 ժ. անկիւն Ртищевская և Лермонтов. փողոցների, տ. № 19, նախկին բնակարան, (№ 6) հանգուցեալ մատենագիր Մուրացանի կահ-կարասիքը վաճառվելու է ազատ աճուրդով։ Ցանկալի էր, որ ներկայ լինէին մեր գրագէտները և մի-մի առարկայ ձեռք բերէին իբրև յիշատակ իրանց ընկերօջից։

◆ Ստացանք Սեդր. Մանդինեանի «Նոր Այբբենարան», գ. 15 կ.։

◆ Բագուից մեզ գրում են, որ օգոստ. 16-ին, ս. Աստուածածնի վերափոխման տօնի առիթով, անագին բազմութիւն էր հաւաքվել տեղական մայր եկեղեցում։ Եկեղեցու ա. քահանայ հ. Գրիգորեանը, առիթից օգտվելով, բացատրեց ժողովրդին Էջմիածնի և նրա գահակալ կաթողիկոսների նշանակութիւնը հայութեան և նրա եկեղեցու համար։ Յիշեցրեց եկող սեպտեմբերի 13-ին Էջմիածնում կատարվելիք կաթողիկոսական օծման մասին և հրաւիրեց ցանկացողներին ներկայ գտնվել այդ փառաւոր հանդէսին։

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԿԵԱՆՔԻՑ

◆ Հաղորդում են որ վերջնականապէս վճռված է վերացնել Վիլնայի գեներալ-նահանգապետութիւնը։ («Р.»)

◆ Լուրերին նայած, առևտրի և արդիւնաբերութեան մինիստրութեան կրթական բաժինը հրահանգով յայտնել է բոլոր ենթակայ կրթական հաստատութիւնների վերատեսուչներին, որ նրանք կարող են բացառիկ դէպքերում միջնորդութիւն յարուցել՝ ընդունելու մրցութեամբ քննութիւն բռնող հրէաներին նօրմայից դուրս։

◆ Եգօր Լարիչկինի ձերբակալումը.—Հաղորդվեց արդէն, որ ռուս ժողովրդի միութեան անդամ Եգօր Լարիչկինը, որ մեղադրվում է առաջին Պետական Դումայի անդամ Մ. Հերցէնշտէյնի սպանութեան մէջ, ձերբակալված է։ Լրացուցիչ կերպով հաղորդում են հետևեալ մանրամասնութիւնները։ Լարիչկինը որոնվում էր երկու տարուց աւել։ Այդ ժամանակաշրջանում նա յաճախակի և երկար ժամանակով ապրում էր Պետերբուրգում։ Այս օրերս մի բանուոր իմանում է, որ Եգօր Լարիչկինը, նրա վաղեմի ծանօթը, եկել է Պետերբուրգ և ապրում է իր մերձաւոր ազգականների մօտ։ Բանուորը օգոստոսի 8-ին գնում է տրված հասցէով և այստեղ գտնում է Լարիչկինին։

Նրանց միջև սկսվեց խօսակցութիւն։

Լարիչկինը դառնութեամբ գանգատվում էր իր վիճակից։ Նա պատմում էր, թէ ինչքան ինքը տանջվել և զրկանքներ է կրել, ինչպէս ինքը քաղցել է, ցոյց էր տալիս, որ նա հագած ունի կեղտոտ շապիկ և այլն։

Ի միջի այլոց Լարիչկինը յարձակվեց իր նախկին բարեկամների և ընկերների վրա, որոնք չը կատարեցին իրանց տուած խոստումները և վերջին ամիսները նրան թողին ամբողջովին բաղդի կամքին։

Պետերբուրգ նա եկաւ յուսալով փող ստանալ բժ. Դուբրօվինից, որպէսզի հնարաւորութիւն ունենայ վերադառնալ գաւառ։ Սակայն Դուբրօվինը քաղաքում չէր, իսկ միութեան միւս գործիչների կողմից նա չէր սպասում հանդիպել այն համակրանքը, որպիսին նա իրան իրաւունք էր համարում ունենալ։ «Այդ պատճառով,—յայտնեց Լարիչկինը ընկերոջը,—ես վճռեցի ինձ յանձնել ֆինլանդական իշխանութիւնների ձեռքը»։

Այն ժամանակ բանուորն առաջարկում է Լարիչկինին անմիջապէս իր հետ միասին մեկնել Տերիօկի։ Լարիչկինը դրան յօժարված պատասխանեց. «Գնանք»։

Ճանապարհին Լարիչկինը շարունակ խօսում էր իր նախկին բարերարների և դըրդողների սև ապերախտութեան մասին, պատմում էր, թէ ինչպէս էր կազմակերպված Հերցէնշտէյնի սպանութիւնը, ինչպէս նա այդ սպանութիւնից յետոյ Պետերբուրգից փախաւ, ինչպէս «սօւզնիկները» մըտածում էին վերջ դնել նրա կեանքին և այլն, և այլն։

Ի միջի այլոց նա դրականապէս պնդում էր, որ երկու անգամ «սօւզնիկները» կըրակեցին նրա վրա և մի անգամ վիրաւորեցին։

Լարիչկինի ասելով, նրա կեանքի դէմ մահափորձերին մասնակցել է Մօսկվայի մի չափազանց յայտնի սօւզնիկ։

Գիշերը Լարիչկինը և բանուորը հասան Տերիօկի և անմիջապէս գնացին Լէնմանի մօտ։ Լէնմանը Լարիչկինին ենթարկեց նախնական հարցափորձի։

Հետևեալ օրը Լարիչկինը վերստին հարցաքննվեց Լէնմանից և դըրանից յետոյ ուժեղ պահակախմբերի ուղեկցութեամբ ուղարկվեց Վիբօրգի բանտը, ուր և տեղաւորվեց իր նախկին պետ Ն. Իւսկէվիչ Կրասօվսկուց և Ալ. Պօլօվնէվից առանձին։ («Р.»)

ու պատերազմական նաւեր գնելու» *)։

Այս տեսակէտից ինչքան բնական է եւրօպական բուրժուազիայի յենվելը պարսկական ֆէօդալական կառավարութեան վրա, նոյնքան բնական է պարսկական բուրժուազիայի կռիւը ինչպէս ֆէօդալիզմի, նոյնպէս և Եւրօպայի վաշխառուական կապիտալի դէմ։

Եւրօպական ինդուստրիայի հետ՝ Պարսկաստան մտաւ նաև եւրօպական կուլտուրա։ Որպէս զի իրանց արտադրութիւնները հեշտութեամբ և աւելի խոշոր չափով տարածեն Պարսկաստանի զանազան կէտերը, օտար ներմուծողները պէտք պիտի զգային հաղորդակցութեան բարեփոխված միջոցների։ Օգտվելով պարսիկ պետութեան տուած փոխատուութիւններից, օտարերկրեայ պետութիւնները ստանում են խճուղիներ կառուցանելու արտօնութիւններ, որոնք ոչ միայն շահեցնում են իրանց երկիրների կապիտալները, այլ և աւելի են հեշտացնում հաղորդակցութիւնն ու առևտուրը։

Ինչքան զարգանում է ապրանքների փոխանակութիւնը Պարսկաստանի և եւրօպական երկիրների միջև, այնքան աւելի Պարսկաստանի վաճառականներն ու արդիւնագործողները շփվում են եւրօպական հասարակութեան հետ, այնքան աւելի է եւրօպական կուլտուրան մուտք գործում Պարսկաստան, ու այնքան աւելի են պարսիկները ծանօթանում եւրօպական ազգերի կեանքի ու կացի հետ։ Եթէ պարսիկ առևտրականներն ու արդիւնագործողները չեն խորշում այդ կուլտուրայից, որովհետև նրա տարածումը բղխում է անմիջապէս նրանց պատմական միսսիայից. եթէ պարսկական կառավարութիւնը, ընկնելով կախման մէջ օտար կապիտալից, volens nolens բաց էր արել երկրի դռները այդ կուլտուրայի առաջ, սակայն հէնց սկզբից խորթ աչքերով էր նայել նրա վրա Պարսկաստանի կղերականութիւնը, որը, ինչպէս կաթօլիկութիւնը միջին դարերում, մեծ դեր ունի Պարսկաստանի մանաւանդ վերջին տարիների պատմութեան մէջ։ Պարսկաստանի կղերականութիւնը, որ իր ձեռքի մէջ է պահել ժողովրդական կրթութեան գործը, աշխատել է ժողովրդի մէջ վառ պահել հին տրադիցիաները, կրօնական հին, դօգմատիկ հասկացողութիւնները, որովհետև դրանց վրա է նա կառուցել իր դարերի շահագործութիւնը։ Եւրօպական կուլտուրայից, նոր հասկացողութիւններից նա չափազանց խորշել է, յանձին այդ կուլտուրայի տեսնելով իր շահագործութեան հիմունքները քայքայող տարրեր։ Կղերականութիւնը յօրինել է ամեն տեսակ միջոցներ՝ հեռու պահելու մահմեդական պարսիկին եւրօպացուց, հայից և այլն, անուանելով սրանց «մուրտատ», չը մօտենալու և չը քսվելու սահման, և եթէ յիրաւի նրան աջողվել է մթագնեցնել պարսիկ ժողովրդի գիտակցութիւնը, բայց պատմութեան անիւը նա չէ կարողացել թեքել։

Թաւրիզ Արշ. Չիլինկիրեան

(Կը շարունակուի)

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, 16 օգոստոսի

Կ. Հ. Բար. Ընկերութեան խորհուրդը վերջերս հրատարակել է մի «շրջաբերական» և ուղարկել ընկերութիւնից նպաստ խնդրող դպրոցների հոգաբարձութիւններին։ Այդ շրջաբերականի մէջ ասվում է, որ խորհուրդը, տալով դպրոցին որոշ գումար նպաստ, իրան է վերապահում ինչպէս ուսուցիչների, նոյնպէս և դասագրքերի ընտրութեան իրաւունքը։ Այս առիթով «Մշակի» № 175-ում, «Ներքին լուրերի» բաժնում, մի նկատողութիւն է արված ընկ. խորհրդին. լրատուն «տարօրինակ» գտնելով խորհրդի որոշումը՝ մանաւանդ դասագրքերի ընտրութեան վերաբերեալ՝ ասում է. «Այժմ հարց է ծագում. վերջապէս ո՞վ է մեր դպրոցների տէրը. հոգևոր վարչութի՞ւնը, թէ՞ ժողովուրդը». «դպրոցները պէտք է ունենան հաստատված որոշ ծրագիր, դասագրքերը պէտք է ընտրված և հաստատված լինեն եկեղեց. ուսումն. վարչութիւնից և ո՛չ թէ հոգաբարձութիւնը կամ ընկերութիւնը միջամտի դպրոցի ներքին և մանկավարժական գործերին»։

Նախ՝ թէ «ո՞վ է մեր դպրոցների տէրը», այդ հարցը առաջին անգամ չէ տրվում. մեր մամուլը տարիներ շարունակ զբաղված է այդ հարցով և այսօր այդ տողերի հեղինակն էլ գուցէ համաձայնվէր ասելու՝ մեր դպրոցներն անտէր են, օրինական տէրերի—իշխանութեան—յանցաւոր անփութութեան շնորհիւ դպրոցական գործը բարձի-թողի է արված և մեր «կրթարանները» ներկայումս իրանցից մի քաոս են ներկայացնում։

Երկրորդ՝ թէ «դպրոցները պէտք է ունենան որոշ ծրագիր և դասագրքերի ընտրութիւնը պիտի կատարէ ուսումն. վարչութիւնը»,—դրան ոչ մի՝ խելքը գլխին մարդ չէ կարող դէմ լինել. բայց միայն նօրմալ պայմաններում, որից միանգամայն զուրկ է մեր դպրոցական կեանքը։

Ահա այդ աննօրմալ պայմաններն են, որ ակամայից հարկադրել են Կ. Հ. Բ. Ընկ. խորհուրդը ոչ միայն դրամական օժանդակութիւն ցոյց տալ բազմաթիւ դպրոցների և դրանց ազատել փակման վտանգից, այլ նա ստիպված է կատարել նաև վերահսկողի դերը՝ դպրոցի ուսումն. մասի նկատմամբ։

Երբ չը կայ ուսումն. խորհուրդ, երբ չը կայ թեմ. խորհուրդ, չը կայ թեմ. տեսուչ, չը կայ օրինաւոր ծրագիր, կանօնադրութիւն, չը կայ գիտակից հասարակութիւն և գիտակից հոգաբարձութիւն և, վերջապէս, երբ մեր ուսուցիչների մեծագոյն մասը անպատրաստ, անգէտ է իր պաշտօնին, երբ մեր անկօնտրօլ դպրոցներում «Մայրենի լեզուի» փոխարէն «Սաղմոս» էք գտնում աշակերտի ձեռքին, ուսուցչի փոխարէն՝ 80-ամեայ զառամեալ անգրագէտ ծերունին է ճիպոտը ձեռքին կանգնած երեխաների առաջ, որոնք լցված են մի նկուղում և այլն և այլն, և այդ բոլորը, որոնց համագումարը այնքան սիրում ենք անուանել «հայոց եկեղեցական ծխական դպրոց», ուր երեխան ահա չորս տարի է՝ ինչ սովորում է այսպիսի «դպրոցում» և, ի հարկէ, նոյն անգրագէտն է, ինչ որ եղել է դպրոց ընդունվելիս,—այս բոլորի դիմաց, կրթական գործին նախանձախնդիր մարդը, չէ կարող անտարբեր ձևանալ։

Սրանք դառն ճշմարտութիւններ են և յայտնի նրանց, ովքեր շրջել են մեր դըպրոցները։

Այսպիսի պայմաններում ընկերութիւնը իր վրա վերցնելով դպրոցի նաև ուսումնական մասի վերահսկողութիւնը, կարծում ենք, պէտք է միայն խրախուսանքի արժանանար և ոչ որևէ նկատողութեան։

Լրատուի արտայայտած ցանկութիւնները՝ մեր դպրոցների վերաբերեալ՝ գովելի են, բայց դրանք նորութիւններ չեն։ Ո՞ւր է ձեր մասնանշած թեմական կամ ուսումնական խորհուրդը, որին, այս դէպքում, սիրով և շնորհակալութեամբ տեղի կը տար ընկերութիւնը։ Չը պէտք է մոռանալ, որ 10—15 օրից յետոյ վերաբացվում են մեր դպրոցները, ուսումնական տարին սկսվում է. ներկայումս շատ հոգաբարձուներ արդէն պայմանաւորվել են իրանց ցանկացած ուսուցիչ վարժուհիների հետ. այդ հոգաբարձուները, որոնց 90 տոկոսը յամենայն դէպս որևէ առնչութիւն չունի դպրոցական գործի հետ, դպրոցական նաև ուսումնական մասի այդ ղեկավարները ներկայումս գրավաճառների խորհրդով են իրանց խնամքին յանձնված դպրոցների համար դասագրքերի պատուէր տալիս։

Մեր կրթական գործի այս ցաւոտ կողմը, մանաւանդ դասագրքերի ընտրութեան խնդիրը կարօտ է լուսաբանութեան. այդ մասին թերևս առիթ կունենանք առանձին խօսելու, որովհետև, մի քանի տասնեակ խայտառակ «ձեռնարկների» շարքում, մեր դպրոցներում գտնում էք նաև, ինչպէս յիշեցի, ոչ միայն «Սաղմոս» կամ 60-ական թւականներին հրատարակած «Азбука»-ներ, այլև Կիպերտի «Քաղաքակրթութեան պատմութիւնը»։ (Կիպերտը—ռուսերէն—աւանդվում է մեր տարրական դպրոցների մանուկներին!! Այդպէս է ցանկացել «ցենզաւոր» ուսուցիչը. աչքներս լոյս)։

Սրանք ճշմարտութիւններ են, և ցանկացողները կարող են գալ ընկերութեան գրասենեակ և ստուգել դպրոցներից ստացված ընդարձակ տեղեկագրերում։

Հրապարակի վրա եղած այնքան անպէտք, բայց դժբաղդաբար տարածված գրքերը իբր բաւական չեն, այժմ էլ Թիֆլիսի տպարաններում գիւղական ուսուցչական միամեայ փորձառութիւն ունեցող մեր «մանկավարժները» իրանց պատմական «համեստութիւնը» կորցրած՝ տպարաններով ձեռագրներ են հրատարակում և հայ անտէր դպրոցի շէնքին փաթաթում։

Այս բոլորը խորհելու արժանի է։

Եւ Կ. Հ. Բ. Ընկ. խորհուրդը, տալով դպրոցին նպաստ և դրան ազատելով փակման վտանգից, այն, ինչ խիստ նպատակայարմար է համարում վերև նկարագրած այս աննօրմալ պայմաններում իրան վերապահել ուսուցիչ-վարժուհիների և դասագրքերի ընտրութեան իրաւունքը։ (Հարկաւ կընտրվի և ուսուցիչներին կը յանձնարարվի համեմատաբար աւելի լաւ դասագրքերի ցուցակ, վերջնական ընտրութիւնը թողնելով նրանց)։ Ընկերութեան խորհուրդը, որպէս մեր դպրոցական գործին նախանձախնդիր մի մարմին, այս դէպքում ցանկանում և աշխատում է մեր «կրթարանները» գէթ կարելոյն չափ ազատ պահել խալիֆայական տէր-թողիկեան տիպի վարժարաններ դառնալուց՝ դպրոցական այդ աննօրմալ, բայց անցողական շրջանում, մինչև որ ամենքիս համար ցանկալի հաստատութիւնները՝ «ուսումնական» և «թեմական» խորհուրդները կեանք կառնեն և գործօն դեր կը խաղան։

Ընկերութեան խորհուրդը իրան վարձատրված կը զգայ և նրանով, եթէ իր որոշումների առիթով օր առաջ գործի դիմեն մեր դպրոցական ղեկավար մարմինները՝ ուսումնական և թեմական խորհուրդները։

Իսկ մինչ այդ, խորհուրդը որոշել է, անցեալ ուսումն. տարվայ օրինակով, որչափ հնարաւոր է, հսկել ընկերութեան նպաստով պահպանվող դպրոցների նաև ուսումնական մասի վրա։

Գուցէ ոմանք այս դէպքում խօսեն, այսպէս ասած, ժողովրդի (յանձին հոգաբարձութեան) իրաւունքը բռնաբարելուց (մեր այդ «ժողովրդական իրաւունքը»). այդպիսիները թող չը մոռանան, թէ ովքեր են մեր գիւղական հոգաբարձուները։

Պէտք է զգոյշ լինել, պէտք է միշտ դըպրոցի շահը ի նկատի ունենալ և չը զուրգուրալ այնպիսի թէօրիաներ, որոնք գործնական կեանքում արժէք չունեն։

Կ. Հ. Բ. Ընկ. դպրոցների տեսուչ
Վ. Տէր-Աբրահամեան

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐ. ՀԵՌ. ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

15 օգոստոսի

ՎԱՐՇԱՎԱ։ Քարհատների երկարատև գործադուլի պատճառով պետական բանկի շինութեան կառուցման մասնաժողովը յայտնեց կապալառուներին, որ բերել կը տայ միւս քաղաքներից բանուորներ, եթէ աշխատանքները չը վերսկսվեն մինչև օգ. 17-ը։

ԿԻԵՎ։ Կիէվօ-Պեչերեան վանքը հանդիսաւորութեամբ տօնում է իր եկեղեցական տօնը։ Եկել են ամեն կողմից մօտ 40,000 ուխտաւորներ։

ԻՇԼ։ Ֆրանց-Յօզէֆ կայսրը մեկնեց Ինսբրուկ։

ՎԻՑԵՐՖԵԼԴ։ Կէսօրին աջողութեամբ իջաւ Ցեպպէլինը իր օդապարիկով։

ԻՆՍԲՐՈՒԿ։ Ֆրանց-Յօզէֆ կայսրը ժամանեց օգոստոսի 15-ին, երեկոյեան 6 ժամին։ Կայարանում կայսրին դիմաւորեցին էրցհերցօգ Ֆրանց-Ֆէրդինանդ և կայսերական տան շատ ուրիշ անդամներ, մինիստր-նախագահը, բարձր իշխանաւոր անձինք։ Ժողովրդի անագին ամբոխ հիացմունքով ողջունեց միապետին գնալու ճանապարհի վրա։ Ազգաբնակութիւնը կայարաններում հանդիսաւոր օվացիաներ էր անում կայսրին։ Երեկոյեան 8 ժամին Տիրօլեան երգեցիկ դաշնակցութիւնը պալատի առաջ սերենադա սարքեց։ Քաղաքը հիանալի կերպով լուսաւորված է, փողոցում մեծ կենդանութիւն է տիրում։

17 օգոստոսի

ՍՏԱՒՐՕՊՕԼ։ Պետական Դումայի անդամ հողատէրերից ընտրվեց Գրեբօվը։

ՍԻՄՖԵՐՕՊՕԼ։ Փոքր-Տօկմաչ գիւղում այրվեցին 300 տներ։

ԱԼԵՔՍԱՆԴՐՕՎՍԿ։ Այրվում է Կրիվօյ Րօգ գիւղը։ Այրվեցին 300 տներ։

ՍԱՐՕՏՈՒԲ։ Պօգար քաղաքում այրվեցին 200 տներ, 10,000-ից աւելի բնակիչներ մնացին անապաստան։

ԲԵՐԼԻՆ։ Մեկնեց Ցեպպէլինը իր օդապարիկով դէպի հարաւ-արևմուտք։

ԽՕԼԵՐԱ

Պետերբուրգ, 15 յուլիսի.—Խօլերայով հիւանդացան 20, մեռան 10 հոգի, հիւանդների թիւն է 311։

Խօլերան շարունակվում է զոհեր տանել Եկատերինբուրգում, Պօլտավայում, Նօվգօրօդում, Պօլօցկում, Կօստրօմայում, Եարօսլավլում, Տվէրում և այլն։

Պետերբուրգ, 17 օգ.—Խօլերայով հիւանդացան 16, մեռան 12 մարդ։

Պարիզ.—Խօլերայի երկիւղից, թէ մի գուցէ այդ համաճարակը Ռուսաստանից մուտք գործէ նաև Ֆրանսիայի սահմանները, կառավարական հրովարտակով պատուիրագրվում է բռնել և չեզոքացնել Ֆրանսիա եկող բոլոր այն ճանապարհորդներին, որոնց բժիշկները կը գտնեն խօլերայով հիւանդ կամ կասկածելի։ Հրովարտակը չէ պատուիրում սանիտարական քննութիւն բոլոր ճանապարհորդների նկատմամբ, որոնք գալիս են վարակված տեղերից։ (Հ. Գ.)

Խմբագիր՝ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Յ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀԱՐԿԱՒՈՐ Է
ՍԱՄԱՐՂԱՆԴԻ ՀԱՄԱՐ
ՔԱՀԱՆԱՅ
Առայժմ ժամանակաւոր, միջնակարգ կըրթութեամբ, պետական լեզուին տիրապետող։
Պայմանների համար դիմել՝ Самаркандъ, Багдасару А. Газарову.
Ծխական հոգաբարձութիւն
(ա. օ.) 807. 5—1

---

*) К. Каутскій. „Американскій и русскій рабочій". стр. 16—17.

Եղեսիայի հայոց եկ.-ծխ. օրիորդաց միդասեան և աղայոց երկդասեան դպրոցների համար հարկաւոր է **մի ուսուցիչ** ռուսաց լեզուի տարեկան 400 ր. ռոճիկով և **մի ուսուցչուհի** 300 ր. ռոճիկով. վերջինս կը տրվի ռոճիկից՝ զատ միմիայն սենեակ: Ցանկացողները թող շտապեն դիմելու հետևեալ հասցէով՝ Черезъ гор. Моздокъ въ м. Эдиссію, Попечительству армянскихъ училищъ.

Հոգաբարձութիւն

806. (չ. հ. ու.) 3—1

ԷԺԱՆ ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ

«Պերֆէկտ» պաստէրիզատոր և սառնարան կաթնատնտեսութեան համար: Ֆրէյլինսկայա փող. № 6. ներքևի յարկում:

804. (չ. ու.) 2—1

Ռ. ԽԱՆ-ԱԶԱՏԻ և Գ. ՎԱՐԴԱՆԵԱՆԻ

Նախապատմական մարդը

և

Հայկական առասպելներ

Գինն է 50 կ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Գինն է 75 կ.

Պատկերազարդ դասագրքերը 3-րդ և 4-րդ բաժանմունքների, ինչպէս նաև ժողովրդական ընթերցանութեան համար, վաճառվում են «Գուտտենբերգ» և «Կենտրոնական» գրավաճառանոցներում:

805. (օ. մ.) 10—1

ՀԱՇՒԱՊԱՀՈՒԹԻՒՆ

Նրանց, որոնք ցանկանում են ծանօթանալ իտալական կրկնակի հաշւապահութեան և առևտր. գիտութիւնների զաօշնի սովորեցման ժողովրդական իմ մեթօդի հետ, ուղարկում եմ ծրագիրը և փորձնական դասախօսութիւնը ձրի:

Я. Ю. МАКЪ гор. Либава.

(օգ. 8, 18) (П.101888) 637. 5—5

Մերվի հայոց ծխական դպրոցի համար հարկաւոր է՝ ՄԻ ՎԱՐԺՈՒՀԻ, որ աւանդելու է 12 դաս ռուսաց լ., 6 դ. ձեռագործ և 5 դ. թւաբանութիւն. ՄԻ ՈՒՍՈՒՑԻՉ 12 դ. հայոց լեզու, 4 դ. կրօնութիւն, 2 դ. հայերէնագիտութիւն, 3 դ. բնական պատմութիւն, 4 դ. վայելչագրութիւն և ՄԻ ՈՒՍՈՒՑԻՉ 10 դ. թւաբանութիւն, 2 դ. հայոց պատմ., 6 դ. նկարչութիւն և 6 դ. երգեցողութիւն: Վերջինս պիտի պատրաստէ քառաձայն երգեցիկ խումբ: Իւրաքանչիւրին 700 ր. ռոճիկ. ճանապարհածախս, բնակարան և վառելիք մտնում են ռոճկի մէջ: Խնդիրների հետ պէտք է ուղարկել աւարտման և ծառայութեան վկայականները:

Դիմել՝ Мервъ (Закаспійскій край), Ишхану Теръ-Погосову.

797. (կ. ե.) 3—2

Լոյս տեսաւ

„ԴԱՍԸՆԿԵՐ“

Առաջին տարվայ
Այբբենարան-ընթերցարան
Բոլորովին նոր ուղղութեամբ
Զարդարված բազմաթիւ գունաւոր պատկերներով
Դասագրքին կից կայ համառօտ բացատրութիւն գործադրողներին:
Կազմեցին
Ա. ՉԻԼԻՆԿԱՐԵԱՆ և Տ. ՌՈՍՏՈՄՃԵԱՆ
Աշխատակցութեամբ ԱԻ. ԻՍԱՀԱԿԵԱՆԻ:

Ծանօթանալ ցանկացող դասատուները կարող են ձրիաբար ստանալ «Գուտտենբերգ» գրախանութից: Օտար տեղերից դիմողները պիտի ուղարկեն միմիայն ճանապարհածախքը 10 կ. պօստի մարկայով:

ԿԱԶՄԱԾ
Գինն է 50 կ.

Գումարով առնողներին 20 տոկոս զեղչ: Ցանկացողները դիմեն Թիֆլիս, «Գուտտենբերգ» գրախանութին:

(օ. մ.) 10—5

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ ՏԱՐԱԾՈՂ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԵՐԿՐՈՐԴ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԴՊՐՈՑ

Քննութիւնները օգոստոսի 31-ին. ընդունվում են քաղաքային 4-դասեան ընթացաւարտները առանց քննութեան 4-րդ դասարանի համար: Տարեկան վճարը 80 ր.: Ժամ. հասցէն 1 ая Тумановская № 13.

(շ. ե. հ.) 790. 5—2

ԲԺՇԿԱՊԵՏ

Տ. ԳԷՈՐԳԲԷԳԵԱՆ

Աչքի հիւանդութիւններ

Ընդունելութիւնը ամեն օր
Առաւօտեան ժամը 10—1
Երեկոյեան ժամը 5—7
Վելիամինօվսկայա փող № 8

(օ. մ.) 783. 100—3

ԲԺԻՇԿ

Գ. Ն. ՄԱՂԱՔԵԱՆ

Ներքին և երեխայոց հիւանդութիւններ, առանձնապէս ստամոքսի և աղիքների հիւանդութիւններ:

Հիւանդների ընդունելութիւնը { 12—1 առաւօտեան, 5—6 երեկոյեան

Միքայէլեան փող., № 36, տ. Ծաւճանիձէի:

100—5

ՍՏ. ԼԻՍԻՑԵԱՆԻ, ՅՈՎՀ. ԹՈՒՄԱՆԵԱՆԻ ՈՒ Լ. ՇԱՆԹԻ
ԿԱԶՄԱԾ

ԼՈՒՍԱԲԵՐ

Հայերէնի դասագիրք

Ա. տարի երրորդ տիպ	30 կ.
Բ. տարի, երկրորդ տիպ, բարեփոխ	45 կ.
Գ. տարի, առաջին տիպ	65 կ.
Դ. տարի (տպվում է	65 կ.

Ա. և Բ. տարիներն ընդունված են կովկասեան շրջանի ուսումնարանական հոգաբարձուի կողմից իբր ըն դասագիրք պետական դպրոցի համար:

Գլխաւոր պահեստներն են հետևեալ գրախանութները Թիֆլիսում՝ «ԳՈՒՏՏԵՆԲԵՐԳ», ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ, Բագւում՝ Сотрудникъ, Երևանում Յովհաննիսեանի և Շուշում Բ. Տէր-Սահակեանի:

ԳՐԱԽԱՆՈՒԹՆԵՐԻՆ ԶԵՂՋ 20%

(կ. ե.) 21—11

200 ՌՈՒԲԼԻ ՆՈՒԷՐ ԵՆՔ ՏԱԼԻՍ



Ով կապացուցի, թէ մեր ապրանքը չէ համապատասխանում գնին: 12 ր. տեղ 3 ր. 95 կ° ուղարկում ենք 10 անհրաժեշտ արժէքաւոր իր 1) սև պողպ. ժամ. անկէր կամ կանանց ցիլինդ., 40 ժ. մէկ առանց բանալիի լարվող ժամ., ռոպէ առ ռոպէ ճշգած, 8 տարվայ երաշխաւոր.. 2) գեղեցիկ չը սևացող շղթայ. 3) նոյնպիսի բրէլօկ. 4) զամշի պարկ, ժամ. փչանալուց պահելու, 5) կաշուի նորաձև քսակ 6 բաժ., հարթ և գրպան պահելու խիստ նպաստաւոր. 6) շահաւէտ նորոյթ—ամերիկակ. անվտանգ «Ծանիտա» ածելի, որով ամեն ոք առանց որևէ պատրաստութեան կարող է անվնաս և շատհեշտ սափրվել. 7) սափրվելու վրձին. 8) նիկէլի թաս. 9) ածելին սրելու փոկ. 10) գեղ. դուբլէ մատանի «Օպալ» քարով: Այս բոլոր իրերն ուղարկում ենք միայն 3 ր. 95 կ., 2 զարնիտ. 7 ր. 40 կ., պատուէրն առանձին պէս, վճր. ձճ. և առանց կանխավճ.: Նոյնպիսի զարնիտ., աւելի լաւ մեխանիզմ. ժամաց., 4 ր. 50 կ., 2-ը 8 ր. 50 կ.: Նոյնպիսի զարնիտ. 84 պր. արծաթէ ժամացոյցով՝ 8 ր. 25 կ., 2 զարնիտ.—16 ր.: 1—2 զարնիտ. ճանապ. 40 կ. (Սիբիր 75 կ.): Հասցէն՝ Т-во ЗАРЯ, Варшава, отдѣл.

(4, 11, 18, 25, սեպ. 1, 6) (В. 43824) 690 6—2

Ժողովրդական Լուսաւորութեան Մինիստրութեան իրաւասութեան տակ.
Պետերբուրգի Կայսերական Գեղարուեստական Ճեմարանի վկայագրով

ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

ԳԱՐԵԳԻՆ ԼԵՒՈՆԵԱՆԻ

ԹԻՖԼԻՍՈՒՄ

(Чавчавадзевская № 20)
ԵՐԿՈՒ ՍԵՌԻ ԱՆՁԵՐԻ ՀԱՄԱՐ
(Երրորդ տարեշրջան)

ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԸ ՍԵՊՏ. 15-ԻՑ ՄԱՅԻՍԻ 15-Ը ԱՄԵՆ ՕՐ ԵՐԵԿՈՆԵՐԸ 5—7 Ժ.

Աւանդվելիք առարկաներն են՝ նկարչութիւն, գծագրութիւն, գեղագրութիւն (հայ և օտար լեզուներով), ձեռարուեստ, փորագրութիւն (փայտի և պղնձի վրա), քանդակագործութիւն, երկրաչափական ձևագիտութիւն, հեռանկար (պերսպեկտիվ), գոյների և ստուերների տեսութիւն:

ԲՈԼՈՐ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԸ ՄԱՍՆԱԳԷՏՆԵՐ ԵՆ

ԱՒԱՐՏՈՂՆԵՐԸ ՍՏԱՆՈՒՄ ԵՆ ԱՏՏԵՍՏԱՏՆԵՐ

Տարեկան վճարն է 40 ր. կամ ամսակ. 5 ր., դպրոցականների համար 25 ր. և 3 ր.: Ցանկացողները թող բարեհաճեն յայտնել այդ մասին կուրսերի հիմնադրին, որից և կարելի է ստանալ աւելի մանրամասն տեղեկութիւններ. անձնական տեսակցութեան համար ամեն օր առաւ. 9—11: Օտար քաղաքներից դիմել՝ Тифлисъ. почт. ящ. 133. 771. (ե. շ.) 5—3



Ա. ՄՈԶԷՐ

Ժամացոյցների խոշոր ֆաբրիկանտ, աշխարհիս յայտնի Ա. Մոզէրը իր ֆաբրիկայից բաց չէ թողնում չը ստուգված ժամացոյցներ: Ա. ՄՈԶԷՐԸ ծառայում է իբրև ամենալաւ երաշխաւորութիւն ժամաց. յատկութեան, ամրութեան և ճշգութեան: Ա. ՄՈԶԷՐԻ ԺԱՄԱՑՈՅՑԸ, սև պողպ., տղամարդկ., բաց, շատ տափակ (արծաթէ բուբլու չափ), ֆանտաստ. ցիֆերբլ., լարելը առանց բանալիի, ռէմօնտուարը 15 քարի վրա, ձեր նոր տեսակի, շքեղ—12 բուբլու փոխար. ՄԻԱՅՆ 3 ր. 25 կ., 2 հատը 6 րուբ.: Կանանց ժամ., բաց՝ 3 ր.: Ճանապարհածախքը 1—4 հատի համար 40 կ., Սիբիր 75 կ.: Պատուէրները կատարվում են վերադիր վճ. և առանց կանխավճ.: Շքեղ շղթաներ, նորաձև ոսկուց, բրէլօկով—հատը 75 կ. և 1 ր. 50 կ., երկարը՝ 2 ր. 50 կ. և 3 ր. 50 կ.: Հասցէն՝ Т—во „Патентъ“, Св. Креста № 48 Отдѣл. 23. Նախազգուշութիւն.—Պ. պ. գնողների ուշադրութիւնն ենք դարձնում, որ մօզէրեան իսկական ժամացոյցներն են «Ա. ՄՈԶԷՐ»:

(5, 19, սեպ. 2) (В. 43977) 691. 3—2

Շուշու Թեմական դպրոցի վարչութիւնը յայտնում է:

1) Այս տարի բացվում է Զ. դասարան: Ոչ ոք առանց քննութեան Զ. դասարան չի ընդունվի:

2) Քննութիւնները և վերաքննութիւնները սկսվում են օգոստ. 25-ից:

3) Խնդրագրերի հետ պիտի ներկայացնել ծննդեան, ծաղկի պատուաստման վկայականները, այլ և թոշակադրամ՝ տարեկան 20 ր.:

4) Ձրիավարժ նոր աշակերտ այս ուսումն. տ. չի ընդունվի:

793 2—2

Եաղրայի Հայոց ծխ.-եկ. երկսեռ միացեալ միդասեան ուսումնարանը որոնում է ՄԻ ՑԵՆԶԱԻՈՐ ՈՒՍՈՒՑԻՉ. աւանդելու է հայոց և ռուսաց լեզուները, թւաբանութիւն և երգեցողութիւն 2 դաս, շաբաթական ընդամենը 24 դաս. ցանկացողները դիմելու են ուղղակի Հոգաբարձութեան:

Ի դիմաց Հոգաբարձութեան
Գանձապահ՝ Յ. Խալըխեան
Քարտուղար՝ Գ. Ք. Տուրքայեան

767. 4—4

Ց. Դաղբաշեան

1. Լիակատար ռուս հայ բառարան: Գինը 8 ր., կազմով 9 ր. և աւելի՝ նայած կազմին:

2. Լիակատար հայ-ռուս բառարան: Բաժանորդագինը 5 ր., առաջին բառարանիս բաժանորդների և գնորդների համար 4 ր.: Գրավաճառների մօտ բաժանորդ չը գրվել

3. Գրպանի ռուս հայ բառարան: Բաժանորդագինը 2 ր. 50 կ.:

4. Ռուսերէն այբբենարան: Գինը 25 կ.:

Դիմել՝ Тифлисъ, Хачатуру Теръ-Хачатрянъ, Темные Ряды և հեղինակին՝ С.-Петербургъ. А. Дагбашяну. До востребованія.

(ե. հ.) 2—2

Առաջիկայ ուսումնական տարվայ սկզբից

Թաւրիզում կը բացվի

ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԱԿԱՆ

Կենտրոնական դպրոց

երրորդ և չորրորդ դասարաններով (երկսեռի համար), մօտաւորապէս Գէորգեան ճեմարանի և թեմական դպրոցների ծրագրով: Հրաւիրվում են համալսարանաւարտ ՏԵՍՈՒՉ, ՄԻ ՈՒՍՈՒՑԻՉ բարձրագոյն կրթութեամբ և ՄԻ ՎԱՐԺՈՒՀԻ միջնակարգ կրթութիւն ստացած:

Պայմանների մասին դիմել՝ Манглисъ, Զիբրայէլ Բուդաղեանց, Воронцовская ул. дача Гульвердова.

(ե. հ. շ.) 752. 6—5

!ԷԺԱՆ ԱՆԿԱՐԵԼԻ Է!

2 ր. 75 կ.:

Ուղարկում եմ «Տրիումֆ» շեվիօտը, $4\frac{1}{4}$ արշ., տղամարդկանց հագուստի համար: Չը նայած չափազանց էժանութեան՝ «Տրիումֆ» կտորը բրդից է (ոչ բամբակից) և ունի բոլոր յատկութիւնները ամենալաւ կտորների—միանգամայն ամուր, ձեռնտու և շքեղ է: Գոյները՝ սև, կապոյտ, շագանակագոյն, ձիթագոյն: Ճանապարհածախքը 55 կ.: Երեք և աւելի կտոր բերել տալուց ճանապարհածախքը իմ հաշւին: Պահանջները հասցէագրել՝ Въ фабрику Т—во „ЭХО“, г. Лодзь, № 15.

Թղթակցութիւնները ռուսերէն լեզուով:

(շ. ե.) (В. 44609) 706. 10—4

Հաւլաբարի Շամքոնեանց (Կարմիր Աւետարան) ծխական դպրոցը այս տարի ունենալու է միայն

ԱՌԱՋԻՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ:

Աշակերտների ընդունելութիւնը լինելու է օգոստոսի 28-ից:

Հոգաբարձութիւն

(կ. ե. կ.) 471 3—3

Տ. Մ. ՓԻԼՈՅԵԱՆԻ

Առևտրական գիտութիւնների կուրսերում

ՖՐԱՆՍԵՐԷՆ, ԳԵՐՄԱՆԵՐԷՆ ԵՒ ԱՆԳԼԻԵՐԷՆ

կարդալ, գրել և խօսել սովորեցնում են 8 ամսում տեսական և գործնական զբաղմունքների միջոցով. կազմակերպվում են խմբակներ ըստ լեզ. աւարտման վկ. ձեռք բերելու համար: Ընդունելութիւնը սեպտեմբերի 1-ից ամեն օր 10—12 և 4—7 ժամ.:

Միքայէլեան պրօսպ. № 24|4

Կուրսերի հիմնադիր՝ առևտր. գիտութեանց կանդիդատ Տ. ՓԻԼՈՅԵԱՆ

808. (չ. ու. կ.) 20—1

Առեւտրի եւ արդիւնաբերութեան մինիստր. տնօրինութեան ներքոյ գտնվող

Տ. Մ. ՓԻԼՈՅԵԱՆԻ

Առևտրական Գիտութիւնների Կուրսեր

(Թիֆլիս, Միքայէլեան պրօսպ. տուն № 24|4)

Տալիս են երկսեռ անձերին մասնագիտական առևտրական կրթութիւն: Դասընթացքն աւարտողներին տրվում են ատտեստատներ: Առարկաներն են. 1) Հաշւապահութիւն (պարզ, իտալ., գերմ., ֆրանս., ամերիկական, բանկային և գործարանական), 2) Առևտրական թւաբանութիւն, 3) Քաղաքատնտեսութիւն, 4) Օրէնսգիտութիւն (առևտրական իրաւունք, մուրհակի կանօնադրութիւն), 5) Առևտրական թղթակցութիւն, 6) Թւաբանութիւն համրիչի վրա, 7) Վայելչագրութիւն, արագագրութիւն (ամենավատ ձեռքի ուղղումն): Առարկաներն ուսուցանվում են Արևմտեան Եւրոպայի առևտրական ակադեմիաների ծրագրով: Ամբողջ տարվայ վճարն է 60 ր.:

Գրելու մեքենայի վրա գրելու դասեր:

→ ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐ ←

Զբաղմունքների սկիզբը սեպտեմբերի 15-ին: Խնդիրների ընդունելութիւնը սեպտեմբերի 1-ից ամեն օր ժ. 10—12 և 4—7.

Համառօտ ծրագիրը և կանօնները ձրիաբար տրվում և ուղարկվում են կուրսերի շէնքում:

Կուրսերի հիմնադիր՝ առևտր. գիտութեան կանդիդատ՝
Տ. ՓԻԼՈՅԵԱՆ

(ե.) 774. 20—3

ԱՌԵՒՏՐԻ ԵՒ ԱՐԴԻՒՆԱԲԵՐ. ՄԻՆԻՍՏՐՈՒԹԵԱՆ ԻՐԱՒԱՍՈՒԹԵԱՆ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ

ՀԱՇՒԱՊԱՀՈՒԹԵԱՆ ԿՈՒՐՍԵՐ

ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԲՐԱՀԱՄԵԱՆԻ

Հեղինակ «Առևտրական, գործարանական և նաւթարդիւնաբերութեան հաշւապահութեան ձեռնարկի», որ ֆինանսների մինիստրութեան ուսումնական բաժնի կողմից ընդունված է իբրև օժանդակ ձեռնարկ առևտրական դպրոցներում և նրանց գրադարաններում:

ՍՈՎՈՐԵՑՆՈՒՄ ԵՒ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԵՆ

ԵՐԿՈՒ ՍԵՌԻ անձանց, գործնական ձևով հաշւապահութիւն և ուրիշ մասնագ. առարկաներ:

Կուրսերում բացի սովորական մասնագիտական առարկաներից աւանդվելու են ձրիաբար քաղաքական տնտեսութիւն (политическая экономія) և որոշ վճարով կամաւոր սղագրութիւն (стенографія):

Ընդունելութիւնն ամեն օր, ժամը 4-ից մինչև 7-ը երեկոյեան, 9-ից մինչև 10-ը առաւօտեան: Պարապմունքները սկսվելու են 1909 թ. սեպտ. 15-ից պարբերաբար ամեն 4 ամիս, ամենայն օր ճաշից յետոյ: Ծրագիրն ուղարկվում է ձրի:

Դասընթացքը աւարտողներին տրվում են, ֆինանսների մինիստրութեան թոյլատրած ծրագրի համաձայն, ատտեստատներ:

Դրանից անկախ՝ բացված են քիչ պատրաստականութիւն ունեցող անձերի համար առանձին լրացուցիչ և կրկնողութեան կուրսեր ռուսաց լեզուի և թւաբանութեան համար:

Ցանկացողներին խնդրում են դիմել գրաւոր կերպով կամ անձամբ կուրսերի հիմնադրին Թիֆլիսում. Н. В. Абраамяну. Николаевская ул., № 22, Телефонъ № 744. ամենայն օր:

Վերևում յիշված ձեռնարկը ծախվում է Ռուսաստանի բոլոր գրավաճառանոցներում: Օտարաքաղաքացիները գիրքը գնելու համար կարող են դիմել հեղինակին, առանց պօստի ծախս վճարելու: Գինն է 3 ր. 50 կոպէկ:

(կ. ե. հ.) 710. 20—9

ՆԻԿՈՂԱՅՈՍ ՏԷՐ-ՂԵՒՈՆԴԵԱՆԻ

1) Մայրենի լեզու ա. տ. լոյս տեսաւ նոր տպագրութեամբ, 34-րդ տիպ, նորանոր բարեփոխութիւններով լրացրած և տեխնիքական դիւրութիւնների կողմից միակը մանուկների համար (ու, իւ և ձայնաւոր յ-ի համար առաջարկված են ամենահեշտ միջոցներ), գինը 20 կ. զեղչը . . . . . 35 տոկ.
2) Մայրենի լեզու, գ. տ. նոր տիպ, 23-րդ, խոշոր լրացումներով, գ. 30 կ. զ. 35 »
3) Մայրենի լեզու գ. տ. 50 կ., չորրորդ տարի 55 կ., զեղչը . . 35 »
4) Քերականութիւն Մայրենի լեզուի, գինը 50 կ., զեղչը . . 35 »
5) Հենչելի բանաւոր և գրաւոր հաշւելու խնդիրներ, առաջին և երկրորդ տարի, գինը 35 կ., զեղչը . . . . . 40 »
6) Նոյն՝ երրորդ տարվայ դասընթացք. գինը 50 կ., զեղչը . . 40 »
7) Մնացել են սակաւաթիւ օրինակներ «Հայորդու» Սրբազան պատմութիւնից Հին և Նոր կտակարանի, գինը 50 կ., գումարով 25 կ.:

Հասցէն՝ Тифлисъ, Михайловская, № 70. Թիֆլիսի գրավաճառները գումարով գնողներին 30 տոկոս զիջումն են անում: (ե.) 686. 5—4

ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՄԻՆԻՍՏՐՈՒԹԻՒՆԻՑ ՀԱՍՏԱՏՎԱԾ

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

ԵՐԿՈՒ ՍԵՌԻ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ

БАКУ, уголъ Красноводск. и Меркурьевск., телеф. № 10—56.

Կուրսերի նպատակն է տալ ունկնդիրներին մասնագիտական և առևտրական կրթութիւն և պատրաստել հմուտ հաշւապահներ: Աւարտողները ստանում են ատտեստատներ:

Կուրսերում աւանդվում են՝ 1) Առևտրական թւաբանութիւն և թւաբանութիւն համրիչի վրա. 2) Հաշւապահութիւն արդիւնաբերական, գործարանական, առևտրական և բանկային. 3) Առևտրական թղթակցութիւն. 4) Առևտրական տնտեսագիտութիւն. 5) Առևտրական և մուրհակային օրէնքներ. 6) Գեղագրութիւն և արագագրութիւն (ուղղումն ձեռագրի). 7) Ուսուցումն գրող մեքենայի վրա: Ցանկացողների համար՝ առանձին վճարով լեզուներ և ստենօգրաֆիա:

Ուսումը սկսվելու է սեպտեմբերի 20-ից: Ընդունելութիւնը սեպտեմբերի 1-ից՝ ամենայն օր կուրսերում, առաւօտեան ժամը 9—12-ը և երեկոյեան 4—7-ը:

Կուրսերի կանօնադրութիւնը (уставъ) և մանրամասն ծրագիրը (программа) տրըվում և ուղարկվում են ՁՐԻԱԲԱՐ: Օտարաքաղաքացիները դիմում են՝ Баку, учредителю коммерческихъ курсовъ А. И. Теръ-Каспарову. (ե. շ.) 731. 20—4

ԱՌԱՋՆԱԿԱՐԳ „ԿԱՎԿԱԶ“ ՀԻՒՐԱՆՈՑ

ԹԻՖԼԻՍՈՒՄ

Անօրինակելի մաքրութիւն, հանգստութիւն, էլեքտրական լուսաւորութիւն, հեռախօս և լողարաններ: 50 համար 1 րուբլուց և բարձր: Քաղաքավարի և ժիր սպասաւորներ: Պ. պ. փօխաժօրներին մեծ զիջում:

ՃԱՇԱՑՈՒՑԱԿ

I ճաշ 2 ափսէից—60 կոպ.
1 սր. օղի և 1 բաժակ գինի
II ճաշ 4 ափսէից—1 րուբլի
1 սր. օղի, 1/2 շ. գինի և 1 ր. սուրճ
III ճաշ 3 ափսէից—75 կոպ.
1 սր. օղի, 1 ր. գինի և 1 ր. սուրճ
IV ճաշ 5 ափսէից—1 ր. 50 կ.
1 սր. օղի, 1/2 շ. գինի և 1 ր. սուրճ:

Ի. ԿՈՐՁԻԼԱԵԱ և Ն. ՍԻԽԱՐՈՒԼԻՁԷ

(օ. մ.) 791. 15—2

Электропечатня Ав. Мугдусіакопова съ С-ми. Большая Ванкская № 3.